

ՅԵՍՈՒԻ ԳԻՐԸ

1

«Տէրոջ ծառային՝ Մովսէսի մահէն ետք, Տէրը խօսեցաւ Նաւէի որդիին՝ Յեսուի, Մովսէսի սպասարկուին, ըսելով. **2** «Իմ ծառաս՝ Մովսէս մեռաւ. հիմա կանգնէ՛ եւ անցի՛ր այս Յորդանանէն, դուն ու այս ամբողջ ժողովուրդը, դէպի այն երկիրը՝ որ ես Իսրայէլի որդիներուն կու տամ: **3** Ձեր ոտքի ներբանին կոխած ամէն տեղը ձեզի տուի, ինչպէս Մովսէսի ըսի.– **4** ձեր հողամասը պիտի ըլլայ անապատէն եւ այս Լիբանանէն մինչեւ մեծ գետը – Եփրատ գետը –, Զետացիներուն ամբողջ երկիրը, ու մինչեւ Մեծ ծովը՝ արեւմտեան կողմը: **5** Կեանքիդ բոլոր օրերուն մէջ՝ ո՛չ մէկը պիտի կարենայ առջեւդ կայնիլ: Ինչպէս Մովսէսի հետ էի, նոյնպէս քեզի հետ պիտի ըլլամ. քեզ պիտի չթողում եւ քեզ պիտի չլքեմ: **6** Ուժովցի՛ր եւ քա՛ջ եղի՛ր, քանի որ այս ժողովուրդին դո՛ւն ժառանգել պիտի տաս այն երկիրը, որուն համար անոնց հայրերուն երդում ըրի՝ որ իրենց տամ: **7** Միայն թէ ուժովցի՛ր եւ շա՛տ քաջ եղի՛ր, որպէսզի իմ ծառայիս՝ Մովսէսի քեզի պատուիրած ամբողջ Օրէնքը զգուշութեամբ գործադրես. անկէ աջ կողմ կամ ձախ կողմ մի՛ շեղի՛ր, որպէսզի ո՛ւր որ երթաս՝ Բյաջողիս: **8** Այս Օրէնքին գիրքը բերանէդ թող չհեռանայ, հապա գիշեր-ցերեկ անոր մասին խորհրդածէ, որպէսզի բոլոր անոր մէջ գրուածները զգուշութեամբ գործադրես. քանի որ այ՛ն ատեն քու ճամբաներդ պիտի յաջողցնես, եւ այ՛ն ատեն «պիտի յառաջդիմես»: **9** Դհա՛ քեզի կը պատուիրեմ՝. «Ուժովցի՛ր եւ քա՛ջ եղի՛ր, մի՛ ահաբեկիր ու մի՛ զարհուրիր. որովհետեւ Տէրը՝ քու Աստուածդ քեզի հետ է՝ ո՛ւր որ երթաս»»:

ՅԵՍՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԿՈՒ ՏԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

10 Ուստի Յեսու ժողովուրդին ուստիկաններուն պատուիրեց. **11** «Բանակին մէջէն անցէ՛ք ու ժողովուրդին պատուիրեցէ՛ք. «Ձեզի պաշա՛ր պատրաստեցէ՛ք. քանի որ երեք օրէն ետք այս Յորդանանէն պիտի անցնիք, որպէսզի մտնէք եւ տիրանաք այն երկրին, որ Տէրը՝ ձեր Աստուածը ձեզի կու տայ իբր ստացուածք»»:

12 Յետոյ Յեսու Ռուբէնեաններուն, Գադեաններուն ու Մանասէի կէս տոհմին ըսաւ. **13** «Յիշեցէ՛ք այն խօսքը՝ որ Տէրոջ ծառան, Մովսէս, ձեզի պատուիրեց՝ ըսելով. «Տէրը՝ ձեր Աստուածը ձեզ հանգստացուց, եւ այս երկիրը ձեզի տուաւ: **14** Ձեր կիները, մանուկներն ու խաշիները թող մնան այն երկրին մէջ, որ Մովսէս ձեզի տուաւ Յորդանանի այս կողմը: Բայց դուք՝ որ զօրաւոր կտրիճներ էք, բոլորդ «սպառազինեալ՝ անցէ՛ք ձեր եղբայրներուն առջեւ եւ օգնեցէ՛ք անոնց, **15** մինչեւ որ Տէրը ձեր եղբայրներն ալ ձեզի պէս հանգստացնէ, ու անոնք ալ տիրանան այն երկրին, որ Տէրը՝ ձեր Աստուածը անոնց կու տայ: Յետոյ վերադարձէ՛ք ձեր ստացուածքին երկիրը եւ տիրացէ՛ք անոր, որ Տէրոջ ծառան՝ Մովսէս ձեզի տուաւ Յորդանանի այս կողմը, դէպի արեւելք»»:

16 Անոնք ալ Յեսուի պատասխանեցին. «Քու բոլոր պատուիրածներդ պիտի

^ա Եբր.՝ Եհովայի

^բ Կամ՝ ուշիմ ըլլաս

^գ Կամ՝ ուշիմ պիտի ըլլաս

^դ Եբր.՝ Միթէ քեզի չպատուիրեցի՞

^ե Կամ՝ գունդ-գունդ

գործադրենք, եւ ո՛ր որ մեզ ղրկես՝ պիտի երթանք: **17** Ինչպէս Մովսէսի կը հնազանդէինք, այնպէս ալ քեզի պիտի հնազանդինք. միայն թէ Տէրը՝ քու Աստուածդ՝ քեզի հետ ըլլայ, ինչպէս Մովսէսի հետ էր: **18** Ո՛վ որ քու «հրամանիդ դէմ ընդվզի եւ խօսքերդ մտիկ չընէ ամէն բանի մէջ՝ որ իրեն պատուիրես, պիտի մեռցուի. միայն թէ ուժովցի՛ր եւ քա՛ջ եղիր»:

ՅԵՍՈՒ ԼՐՏԵՍՆԵՐ ԿԸ ՂՐԿԷ ԵՐԻՔՈՎ

2

Նաւէի որդի՛ն՝ Յեսու Սատիմէն երկու մարդ ղրկեց՝ երկիրը գաղտնի լրտեսելու համար, ու **անոնց** ըսաւ. «Գացէ՛ք եւ զննեցէ՛ք **այդ** երկիրը ու երիքովը»: Անոնք ալ գացին, Ռախաբ անունով պռռնիկ **կնոջ** մը տունը մտան, եւ հոն «մնացին: **2** Երբ երիքովի թագաւորին ըսուեցաւ. «Ահա՛ այս գիշեր Իսրայէլի որդիներէն մարդիկ եկան հոս՝ երկիրը խուզարկելու համար», **3** երիքովի թագաւորը Ռախաբի **մարդ** ղրկեց՝ ըսելով. «Քեզի եկող ու տունդ մտնող մարդիկը դո՛ւրս հանէ, քանի որ անոնք այս ամբողջ երկիրը խուզարկելու եկած են»: **4** Կինը **այդ** երկու մարդիկը առաւ եւ պահեց. ապա ըսաւ. «Իրաւ **այդ** մարդիկը ինձի եկան, բայց իրենց ուրկէ՛ ըլլալը չգիտցայ: **5** Դրան գոցուելու ատենը՝ խաւարին մէջ **այդ** մարդիկը դուրս ելան: **Այդ** մարդոց ո՛ր երթալը չեմ գիտեր. շուտով՝ զանոնք հետապնդեցէք, քանի որ անոնց պիտի հասնիք»: **6** Իսկ ինք տանիքը բարձրացնելով զանոնք՝ պահած էր վուշի ցօղուններու մէջ, որ տանիքին վրայ զետեղած էր: **7** Ուստի **թագաւորին** մարդիկը մինչեւ անցքերը զանոնք հետապնդեցին՝ Յորդանանի ճամբայով. զանոնք հետապնդողներուն դուրս ելլելէն ետք՝ դուռը գոցեցին:

8 ԲԼրտեսները դեռ չէին պառկած՝ երբ «կինը տանիք բարձրացաւ անոնց քով, **9** եւ մարդոց ըսաւ. «Ես գիտեմ թէ Տէրը այս երկիրը ձեզի տուաւ. ձեր ահը մեր վրայ ինկաւ, ու ձեր «պատճառով այս երկրին բոլոր բնակիչները հալեցան: **10** Արդարեւ մենք լսեցինք թէ ի՛նչպէս Տէրը Կարմիր ծովուն ջուրերը ձեր առջեւէն ցամքեցուց, երբ Եգիպտոսէն ելաք. նաեւ ինչ որ ըրիք Յորդանանի միւս կողմը **բնակող** Ամորհացիներուն երկու թագաւորներուն՝ Սեհոնի եւ Ովգի, որ անճիտեցիք: **11** Ուստի երբ **այս բաները** լսեցինք՝ մեր սիրտը հալեցաւ, ու ո՛չ մէկուն «վրայ համարձակութիւն մնաց ձեր պատճառով». քանի որ ձեր Աստուածը՝ Եհովան **միայն** ի՛նք Աստուած է, վերը՝ երկինքի մէջ, եւ վարը՝ երկրի վրայ: **12** Հիմա կ'աղերսե՛մ, Տէրոջմով երդո՛ւմ ըրէք ինձի, թէ քանի ես ձեզի հետ կարեկցութեամբ վարուեցայ՝ դուք ալ իմ հօրս տան հետ կարեկցութեամբ պիտի վարուիք. ինձի «վստահելի նշան մը տուէք, **13** թէ հայրս, մայրս, եղբայրներս, քոյրերս ու բոլոր իրենց պատկանողները ողջ պիտի թողուք, եւ մեր անձը մահէն պիտի ազատէք»: **14** **Այդ** մարդիկը անոր պատասխանեցին. «Եթէ մեր այս արարքը չիմացնէք, ձեր տեղը մեր

⁹ Եբբ.՝ բերանիդ

¹⁰ Եբբ.՝ պառկեցան

¹¹ Եբբ.՝ Անոնք

¹² Եբբ.՝ աճ

¹³ Եբբ.՝ երեսէն

¹⁴ Եբբ.՝ հոգին ալ կը կանգնի ձեր առջեւ

⁹ Եբբ.՝ ճշմարիտ, **այսինքն՝** ապահովութեան, **կամ՝** հաւատարմութեան

անձերը **մեռնից**: Երբ Տէրը այս երկիրը մեզի տայ, քեզի հետ կարեկցութեամբ ու ճշմարտութեամբ պիտի վարուինք»: **15** Յետոյ գանոնք պարանով մը պատուհանէն իջեցուց, (քանի որ իր տունը բերդաքաղաքին պարիսպին վրայ էր, եւ ինք պարիսպին վրայ կը բնակէր,) **16** ու անոնց ըսաւ. «Լե՛ռը գացէք, որ հետապնդողները ձեզի չհանդիպին. հոն երե՛ք օր պահուըտեցէք, մինչեւ որ հետապնդողները վերադառնան. յետոյ ձեր ճամբան գացէք»: **17 Այդ** մարդիկը անոր ըսին. «Այդ մեզի ընել տուած երդումէդ **սա՛պէս** անպարտ պիտի ըլլանք.– **18** ահա՛ **երբ** այս երկիրը մտնենք, սա՛ կրկնակի կարմիր դերձանէ առասանը ա՛յն պատուհանին կապէ՛ ուրկէ մեզ իջեցուցիր, եւ քու հայրդ, մայրդ, եղբայրներդ ու հօրդ ամբողջ ընտանիքը քո՛վդ հաւաքէ՛ այս տան մէջ: **19 Անոնցմէ** ո՛վ որ քու տանդ դռնէն դուրս ելլէ, անոր արիւնը իր գլուխին վրայ պիտի ըլլայ, եւ մենք անպարտ պիտի ըլլանք: Բայց եթէ քու քովդ՝ **այս** տան մէջ բոլոր եղողներուն վրայ ձեռք **դրուի**, անոնց արիւնը մեր գլուխին վրայ պիտի ըլլայ: **20** Իսկ եթէ մեր այս արարքը իմացնես, մեզի ընել տուած երդումէդ անպարտ պիտի ըլլանք»: **21** Կի՛նը ըսաւ. «Ա՛յդպէս թող ըլլայ, ձեր խօսքերուն համաձայն», ու գանոնք դրկեց. անոնք ալ գացին, եւ ինք **այդ** կրկնակի կարմիր առասանը պատուհանին կապեց:

22 Անոնք **անկէ** գացին, լեռնակողմը հասան, ու հոն երեք օր կեցան, մինչեւ որ հետապնդողները վերադարձան: Հետապնդողները գիրենք ամբողջ ճամբային մէջ փնտռեցին, բայց չգտան: **23** Հետեւաբար **այդ** երկու մարդիկը վերադարձան, լեռնէն իջան, **Յորդանանէն** անցան, Նաւէի որդիին՝ Յեսուի գացին, եւ անոր պատմեցին ամէն ինչ որ իրենց պատահած էր: **24** Ապա Յեսուի ըսին. «Ի՛րապէս Տէրը **այդ** ամբողջ երկիրը մեր ձեռքը մատնած է, ու նոյնիսկ **այդ** երկրին բոլոր բնակիչները մեր պատճառով կը հալին»:

ԻՍՐԱՅԵԼԱՅԻՆԵՐԸ Կ՛ԱՆՅՆԻՆ ՅՈՐԴԱՆԱՆԷՆ

3

Յեսու առտուն՝ կանուխ ելաւ, եւ ինք ու բոլոր Իսրայէլի որդիները Սատիմէն մեկնեցան, մինչեւ Յորդանան հասան, եւ անցնելէ առաջ հոն գիշերեցին: **2** Երեք օր ետք՝ ոստիկանները բանակին մէջէն անցան **3** ու ժողովուրդին պատուիրեցին. «Երբ Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ուխտին տապանակը տեսնէք, եւ Ղեւտացի քահանաները՝ որ գայն կը կրեն, դո՛ւք ալ ձեր տեղերէն մեկնեցէք ու անոր հետեւեցէք: **4** Բայց ձեր եւ անոր միջեւ երկու հազար կանգունի չափ միջոց պիտի ըլլայ: Անոր մի՛ մօտենաք, որպէսզի ձեր երթալիք ճամբան գիտնաք. քանի որ “ասկէ առաջ” այս ճամբայէն անցած չէք»: **5** Յեսու ժողովուրդին ըսաւ. «Դուք ձեզ սրբացուցէ՛ք, որովհետեւ Տէրը վաղը ձեր մէջ սքանչելիքներ պիտի ընէ»: **6** Յետոյ Յեսու քահանաներուն խօսեցաւ՝ ըսելով. «Կրեցէ՛ք ուխտին տապանակը ու անցէ՛ք ժողովուրդին առջեւէն»: Ուստի անոնք ուխտին տապանակը կրեցին եւ ժողովուրդին առջեւէն գացին:

7 Տէրը Յեսուի ըսաւ. «Այսօր պիտի սկսիմ ամբողջ Իսրայէլի աչքերուն **առջեւ** քեզ մեծցնել, որպէսզի գիտնան թէ ինչպէս Սոփսէսի հետ էի, **այնպէս ալ** քեզի հետ պիտի ըլլամ: **8** Ուստի ուխտին տապանակը կրող քահանաներուն պատուիրէ՛. “Երբ Յորդանանի ջուրերուն եզերքը հասնիք, Յորդանանի մէջ կայնեցէ՛ք□»:

9 Յեսու Իսրայէլի որդիներուն ըսաւ. «Հո՛ւ մօտեցէք եւ Տէրոջ՝ ձեր Աստուծոյն խօսքե՛րը մտիկ ըրէք»: **10** Ու Յեսու ըսաւ. «Սա՛պէս պիտի գիտնաք թէ ապրող Աստուածը ձեր մէջն է, եւ ձեր առջեւէն Զանաացիները, Զետացիները, Խելացիները, Փերեզացիները,

^Է Երբ.՝ ԱՍ

^Մ Երբ.՝ Երէկ ու նախորդ օրը

Գերգեսացիները, Ամորհացիներն ու Յերուսացիները պիտի վտարէ: **11** Ահա՛ ամբողջ երկրի Տէրոջ ուխտին տապանակը ձեր առջեւէն պիտի անցնի Յորդանանի մէջ: **12** Հիմա Իսրայէլի տոհմերէն տասներկո՛ւ մարդ առէք, ամէն տոհմէ մէկ մարդ: **13** Երբ ամբողջ երկրի Տէրոջ՝ Եհովայի տապանակը կրող քահանաներուն ոտքերու ներբանները Յորդանանի ջուրերուն մէջ ^բմտնեն, Յորդանանի ջուրերը պիտի կտրուին, ու վերէն իջնող ջուրերը կարկառի մը պէս պիտի կայնին»:

14 Երբ ժողովուրդը իր վրաններէն մեկնեցաւ՝ Յորդանանէն անցնելու համար, ուխտին տապանակը կրող քահանաները ժողովուրդին առջեւէն **կ'երթային**: **15** Երբ տապանակը կրողները Յորդանան հասան ու տապանակը կրող քահանաներուն ոտքերը թաթխուեցան եգերքի ջուրին մէջ (արդարեւ հունձքի ամբողջ ժամանակը՝ Յորդանանը իր բոլոր ափերը կ'ողողէ,) **16** վերէն իջնող ջուրերը կայնեցան, եւ Սարթանի քով եղող Ադամ քաղաքէն շատ հեռու՝ կարկառի մը պէս կանգնեցան. իսկ դաշտին ծովը, այսինքն Ադի ծովը, իջնողները բոլորովին կտրուեցան, ու ժողովուրդը անցաւ՝ Երիքովի դիմաց: **17** Տէրոջ ուխտին տապանակը կրող քահանաները Յորդանանի մէջտեղը՝ ցամաքի վրայ անշարժ կայնեցան, երբ ամբողջ Իսրայէլը ցամաքով կ'անցնէր, մինչեւ որ ամբողջ ազգին Յորդանանէն անցնիլը լրացաւ:

ՅԻՇԱՏԱԿԻ ԶԱՐԵՐ ԿԸ ԿԱՆԳԼԵՅԼԵՆ

4

Երբ ամբողջ ազգին Յորդանանէն անցնիլը լրացաւ, Տէրը Յեսուի ըսաւ. **2** «Ժողովուրդէն տասներկո՛ւ մարդ առէք, ամէն տոհմէ մէկ մարդ, **3** եւ անոնց պատուիրեցէ՛ք. “Ասկէ՛ Յորդանանի մէջտեղէն, քահանաներուն ոտքերուն անշարժ կեցած **տեղէն**, ձեզի տասներկո՛ւ քար կրեցէք. զանոնք ^ափոխադրեցէ՛ք ձեզի հետ, ու դրէ՛ք այն իջեւանը՝ ուր այս գիշեր պիտի իջեւանիք»: **4** Յեսու Իսրայէլի որդիներէն իր ^բորոշած տասներկու մարդիկը կանչեց, ամէն տոհմէ մէկ մարդ, **5** եւ Յեսու անոնց ըսաւ. «Յորդանանի մէջտեղը, Տէրոջ՝ ձեր Աստուծոյն տապանակին առջե՛ւ անցէք, ու Իսրայէլի որդիներուն տոհմերուն թիւով՝ ձեզմէ իւրաքանչիւրը իր ուսին վրայ քա՛ր մը թող վերցնէ **անկէ**. **6** որպէսզի ասիկա ձեր մէջ նշան ըլլայ: Երբ վաղը ձեր որդիները **ձեզի** հարցնեն. “Ի՞նչ են այս քարերը ձեզի համար», **7** անոնց պատասխանեցէ՛ք. “Տէրոջ ուխտի տապանակին առջեւէն Յորդանանի ջուրերը կտրուեցան. երբ ան Յորդանանէն կ'անցնէր՝ Յորդանանի ջուրերը կտրուեցան, եւ այս քարերը Իսրայէլի որդիներուն մէջ իբր յիշատակ պիտի ըլլան յաւիտեան»: **8** Իսրայէլի որդիները Յեսուի պատուիրածին համաձայն ըրին. Յորդանանի մէջտեղէն տասներկու քար կրեցին՝ Իսրայէլի որդիներուն տոհմերուն թիւով, ինչպէս Տէրը Յեսուի հրամայեր էր, զանոնք իրենց հետ իջեւանը փոխադրեցին, ու հոն դրին: **9** Յեսու **ուրիշ** տասներկու քարեր ալ կանգնեցուց՝ Յորդանանի մէջտեղը, ուխտին տապանակը կրող քահանաներուն ոտքերուն կեցած **տեղը**. անոնք մինչեւ այսօր հոն են: **10** Տապանակը կրող քահանաները Յորդանանի մէջտեղը կայնեցան, մինչեւ որ լմնցաւ ամէն ինչ՝ որ Տէրը Յեսուի պատուիրէր էր ժողովուրդին ըսելու, Սովսէսի Յեսուի բոլոր պատուիրածներուն համաձայն. ապա ժողովուրդը շտապելով անցաւ: **11** Երբ ամբողջ ժողովուրդին անցնիլը լրացաւ, Տէրոջ տապանակն ու քահանաները անցան՝ ժողովուրդին

^բ Երբ.՝ հանգչին

^ա Երբ.՝ անցուցէ՛ք

^բ Երբ.՝ պատրաստած

առջեւ:

12 Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս տոհմը՝ Իսրայէլի որդիներուն առջեւ «սպառազինեալ անցան, ինչպէս Մովսէս անոնց ըսեր էր. 13 քառասուն հազարի չափ զինուած զօրք Տէրոջ առջեւ անցաւ Երիքովի դաշտը՝ պատերազմի համար:

14 Այդ օրը՝ Տէրը ամբողջ Իսրայէլի աչքերուն առջեւ Յեսուն մեծցուց, ու անոր կեանքին բոլոր օրերուն մէջ իրմէ վախցան՝ ինչպէս Մովսէսէ կը վախնային: 15 Տէրը Յեսուի ըսաւ. 16 «Պատուիրէ՛ Վկայութեան տապանակը կրող քահանաներուն՝ որ Յորդանանէն բարձրանան»: 17 Ուստի Յեսու քահանաներուն պատուիրեց. «Յորդանանէն բարձրացէ՛ք»: 18 Երբ Տէրոջ ուխտին տապանակը կրող քահանաները Յորդանանի մէջտեղէն ցամաք բարձրացան, ու քահանաներուն ոտքերու ներբանները ցամաքի վրայ կոխեցին, Յորդանանի ջուրերը իրենց տեղը վերադարձան եւ «առաջուան պէս իր բոլոր «ափերը ողողեցին»:

19 Առաջին ամսուան տասներորդ օրը, ժողովուրդը Յորդանանէն դուրս ելլելով՝ Գադգադա բանակեցաւ, Երիքովի արեւելեան ծայրը: 20 Յեսու Գադգադայի մէջ կանգնեցուց այն տասներկու քարերը՝ որ Յորդանանէն առեր էին, 21 եւ Իսրայէլի որդիներուն ըսաւ. «Երբ վաղը ձեր որդիները իրենց հայրերուն հարցնեն. “Ի՞նչ են այս քարերը», 22 ձեր որդիներուն գիտցուցէ՛ք՝ ըսելով. “Իսրայէլ այս Յորդանանը անցաւ ցամաքի վրայէն»: 23 Արդարեւ Տէրը՝ ձեր Աստուածը ձեր առջեւէն Յորդանանի ջուրերը ցամաքեցուց՝ մինչեւ որ դուք անցաք, ինչպէս Տէրը՝ ձեր Աստուածը Կարմիր ծովուն մէջ ալ ըրաւ, զայն ցամաքեցնելով մեր առջեւէն՝ մինչեւ որ մենք անցանք. 24 որպէսզի երկրի բոլոր ժողովուրդները գիտնան թէ Տէրոջ ձեռքը ուժեղ է, ու դուք Տէրոջմէն՝ ձեր Աստուծմէն վախնաք «ամէն ատեն»»:

5

Երբ Ամորհացիներուն բոլոր թագաւորները՝ որ Յորդանանի այս արեւմտեան կողմը կը բնակէին, ու Բանանացիներուն բոլոր թագաւորները՝ որ Սծովեզերքը կը բնակէին, լսեցին թէ Տէրը Իսրայէլի որդիներուն առջեւէն, մինչեւ անոնց անցնիլը, Յորդանանի ջուրերը ցամաքեցուցեր է, անոնց սիրտը հալեցաւ, եւ Իսրայէլի որդիներուն պատճառով անոնց վրայ Քհամարձակութիւն չմնաց»:

ԹԼՓԱՏՈՒԹԻՒՆ ԳԱՂԳԱՂԱՅԻ ՄԷՋ

^Գ Կամ՝ գունդ-գունդ

^Դ Եբբ.՝ քաշուեցան

^Ե Եբբ.՝ երէկուան ու նախորդ օրուան

^Զ Եբբ.՝ ափերուն վրայ գացին

^Է Եբբ.՝ բոլոր օրերը

^Մ Եբբ.՝ ծովուն քով

^Բ Եբբ.՝ ա՛լ հոգի չկար

ՅԵՍՈՒԻ ԳԻՐԸԸ

2 Այդ ատեն Տէրը Յեսուի ըսաւ. «Ըեզի ⁴գայլախազէ դանակներ շինէ, ու դարձեալ թլփատէ Իսրայէլի որդիները, երկրորդ **անգամ**»: **3** Յեսու իրեն գայլախազէ դանակներ շինեց ու Թլիփներու բլուր **կոչուած տեղը** Իսրայէլի որդիները թլփատեց: **4** Ահա՛ւասիկ ի՛նչ պատճառով Յեսու **զանոնք** թլփատեց. Եգիպտոսէն ելած ամբողջ ժողովուրդը, արունները, բոլոր պատերազմիկները ճամբան՝ անապատին մէջ մեռան, Եգիպտոսէն ելլելէ ետք: **5** Թէպէտ դուրս ելած ամբողջ ժողովուրդը թլփատուած էր, Եգիպտոսէն ելլելէ ետք ճամբան՝ անապատին մէջ ծնած ժողովուրդը թլփատուած չէր: **6** Արդարեւ Իսրայէլի որդիները քառասուն տարի անապատին մէջ քալեցին, մինչեւ որ Եգիպտոսէն ելլող պատերազմիկներուն ամբողջ ազգը սպառեցաւ. քանի անոնք Տէրոջ խօսքը մտիկ չըրին, Տէրը անոնց երդում ըրաւ թէ իրենց պիտի չցուցնէ այն երկիրը, որուն համար Տէրը անոնց հայրերուն երդում ըրեր էր՝ որ մեզի տայ, երկիր մը՝ որ կաթ ու մեղր կը հոսեցնէ: **7** Ուստի անոնց տեղ իրենց որդիները ⁷հանեց, եւ Յեսու զանո՛նք թլփատեց, քանի որ անթլփատ էին. արդարեւ ճամբան զանոնք թլփատած չէին: **8** Երբ ամբողջ ազգին թլփատուիլը լրացաւ, բանակավայրին մէջ իրենց տեղը կեցան՝ մինչեւ որ առողջացան: **9** Տէրը Յեսուի ըսաւ. «Այսօր Եգիպտոսի նախատինքը ձեր վրայէն ⁸վերցուցի»: Ուստի այդ տեղին անունը մինչեւ այսօր ⁹Գաղգաղա կոչուեցաւ: **10** Իսրայէլի որդիները Գաղգաղա բանակեցան, եւ ամսուան տասնչորրորդ օրը՝ իրիկուան դէմ՝ Երիքովի դաշտերուն մէջ Ջատիկը կատարեցին: **11** Ջատիկին հետեւեալ օրը՝ **այդ** երկրին արտադրութենէն բաղարջ կերան. նոյն օրը բոհրած **ցորեն** ալ **կերան**:

12 Մանանան դադրեցաւ հետեւեալ օրը, երբ **այդ** երկրին արտադրութենէն կերան: **Անկէ ետք** Իսրայէլի որդիները ա՛լ մանանայ չուներան, հապա այդ տարին Քանանի երկրին բերքէն կերան:

ՅԵՍՈՒ ԵՒ ՍՈՒՐՈՎ ՄԱՐԴԸ

13 Երբ Յեսու Երիքովի **մօտ** էր, աչքերը վերցնելով տեսաւ թէ ահա՛ իր դիմացը մարդ մը կայնած էր, որուն ձեռքը մերկ սուր մը կար: Յեսու անոր ¹³մօտենալով՝ անոր ըսաւ. «Մեզմէ՞ ես, թէ մեր հակառակորդներէն ես»: **14** Ան ալ ըսաւ. «Ո՛չ, հապա ես Տէրոջ սպարապետն եմ, ու հիմա եկայ»: Յեսու երեսի վրայ գետին ինկաւ, երկրպագեց եւ անոր ըսաւ. «Իմ Տէրս ի՞նչ կ'ըսէ իր ծառային»: **15** Տէրոջ սպարապետը Յեսուի ըսաւ. «Ոտքէդ հանէ՛ կօշիկդ, որովհետեւ այն տեղը ուր կայնած ես՝ սուրբ է»: Յեսու ալ այնպէս ըրաւ:

ԵՐԻՔՈՎԻ ԱՆԿՈՒՄԸ

6

Երիքով Իսրայէլի որդիներուն պատճառով «ամուր կերպով» փակուած էր. ելլող ու

⁴ Կամ՝ սուր

⁷ Կամ՝ հաստատեց

⁸ Երբ.՝ գլորեցի

⁹ Այսինքն՝ գլորում

¹³ Երբ.՝ երթալով

¹⁵ Երբ.՝ գոցուած

մտնող չկար: **2** Տէրը Յեսուի ըսաւ. «Նայէ՛, Երիջովը, անոր թագաւորը **եւ** զօրաւոր կտրիճները քու ձեռքդ մատնեցի: **3** Ուստի **դո՛ւք՝** բոլոր պատերազմիկներդ՝ քաղաքին շո՛ւրջը դարձէք, ու մէ՛կ անգամ քաղաքը պաշարեցէք. ա՛յսպէս ըրէք վեց օր: **4** Նաեւ եօթը քահանաներ՝ տապանակին առջեւ թող կրեն եօթը ^բՅոբելեանի շեփորները: Եօթներորդ օրը՝ քաղաքին շուրջը եօթը անգամ դարձէք, եւ քահանաները թող շեփորները հնչեցնեն: **5** Երբ Յոբելեանի եղջիւրը երկար հնչեցնեն ու դուք շեփորին ձայնը լսէք, ամբողջ ժողովուրդը մեծ գոչիւնով թող գոռայ. քաղաքին պարիսպները վար պիտի իյնան, եւ ժողովուրդը պիտի բարձրանայ՝ իւրաքանչիւրը շիտակ յառաջ **երթայլով**»:

6 Նաւէի որդին՝ Յեսու քահանաները կանչեց եւ անոնց ըսաւ. «Կրեցէ՛ք ուխտին տապանակը, ու Տէրոջ տապանակին առջեւէն՝ եօթը քահանաներ թող կրեն եօթը Յոբելեանի շեփորները»: **7** Յետոյ ժողովուրդին ըսաւ. «Անցէ՛ք ու քաղաքին շո՛ւրջը դարձէք. զինեալները Տէրոջ տապանակին առջեւէն թող քալեն»: **8** Երբ Յեսու ժողովուրդին խօսեցաւ, եօթը Յոբելեանի շեփորները Տէրոջ առջեւ կրող եօթը քահանաները՝ անցան եւ շեփորները հնչեցուցին. Տէրոջ ուխտին տապանակը անոնց կը հետեւէր:

9 Զինեալները շեփորները հնչեցնող քահանաներուն առջեւէն կ'երթային, իսկ վերջապահները՝ տապանակին ետեւէն. **քահանաները** շեփորները հնչեցնելով կ'երթային: **10** Յեսու ժողովուրդին պատուիրեց. «**Բնաւ** մի՛ գոռաք, ձեր ձայնը թող չլսուի ու ձեր բերանէն խօսք մը չելլէ, մինչեւ այն օրը՝ երբ ես ձեզի հրամայեմ որ գոռաք. ա՛յն ատեն գոռացէք»: **11** Տէրոջ տապանակը քաղաքին շուրջը դարձաւ, մէկ անգամ պաշարելով. յետոյ բանակավայրը մտան եւ բանակավայրին մէջ գիշերեցին:

12 Յեսու առտուն՝ կանուխ ելաւ, ու քահանաները Տէրոջ տապանակը կրեցին: **13** Եօթը Յոբելեանի շեփորները կրող եօթը քահանաները՝ Տէրոջ տապանակին առջեւէն կ'երթային, շեփորները հնչեցնելով. զինեալները անոնց առջեւէն կ'երթային, իսկ վերջապահները՝ Տէրոջ տապանակին ետեւէն. **քահանաները** շեփորները հնչեցնելով կ'երթային: **14** Երկրորդ օրն ալ քաղաքին շուրջը մէկ անգամ դառնալէ ետք բանակավայրը վերադարձան: Վեց օր այսպէս ըրին: **15** Եօթներորդ օրը՝ կանուխ ելան, արշալոյսին ^գծագած ատենը, ու քաղաքին շուրջը եօթը անգամ դարձան նոյն կերպով. միայն ա՛յդ օրը քաղաքին շուրջը եօթը անգամ դարձան: **16** Եօթներորդ անգամին, մինչ քահանաները շեփորները կը հնչեցնէին, Յեսու ժողովուրդին ըսաւ. «Գոռացէ՛ք, քանի որ Տէրը այս քաղաքը ձեր **ձեռքը** մատնեց: **17** Քաղաքը Տէրոջ համար նզովուած պիտի ըլլայ, ան եւ ամէն ինչ որ անոր մէջ է. միայն Ռախաբ պողոտային ողջ պիտի մնայ, թէ՛ ինք եւ թէ տան մէջ իրեն հետ բոլոր եղողները, քանի որ մեր դրկած ^դլրտեսները պահեց: **18** Իսկ դուք **ամէն կերպով** զգուշացէ՛ք նզովուածէն, որպէսզի նզովուածէն առնելով՝ դուք **ալ** նզովուած չըլլաք, Իսրայէլի բանակը ^ենզովքի մէջ չձգէք՝ ու զայն չդժբախտացնէք: **19** Ամբողջ արծաթը, ոսկին, եւ պղինձէ ու երկաթէ անօթները Տէրոջ համար սրբացուած պիտի ըլլան. Տէրոջ գանձարանը պիտի մտնեն»:

20 Ուստի ժողովուրդը գոռաց, մինչ **քահանաները** շեփորները կը հնչեցնէին: Երբ ժողովուրդը շեփորներուն ձայնը լսեց, եւ ժողովուրդը մեծ գոչիւնով գոռաց, պարիսպները

^բ Կամ՝ խոյի եղջիւրէ
^գ Եբբ.՝ ելած
^դ Եբբ.՝ լրաբերները
^ե Եբբ.՝ նզովք չընէք

վար ինկան: Ժողովուրդը քաղաքը բարձրացաւ, իւրաքանչիւրը շիտակ յառաջ երթալով, ու քաղաքը գրաւեցին: 21 Զաղաքին մէջ եղող ամէն ինչ – այդ մարդ թէ կին, երիտասարդ թէ ծեր, արջառ, ոչխար եւ էջ – սուրի բերանէ անցընելով անճիտեցին: 22 Յետու այդ երկիրը լրտեսող երկու մարդոց ըսաւ. «Մտէ՛ք այդ պողոտիկ կնոջ տունը, եւ ինչպէս անոր երդում ըրիք՝ անկէ դուրս հանեցէք կինն ու անոր ամբողջ ունեցածը»: 23 Ուստի այդ լրտես երիտասարդները մտան, եւ Ռախաբը, անոր հայրը, մայրն ու եղբայրները, եւ անոր ամբողջ ունեցածը դուրս հանեցին. անոր ամբողջ գերդաստանն ալ դուրս հանեցին, ու զանոնք Իսրայէլի բանակավայրէն դուրս դրին: 24 Յետոյ քաղաքը եւ ամէն ինչ որ անոր մէջ էր՝ կրակով այրեցին. միայն արծաթը, ոսկին, եւ պղինձէ ու երկաթէ անօթները Տէրոջ տան գանձարանին մէջ դրին: 25 Այսպէս՝ Յետու ողջ պահեց Ռախաբ պողոտիկը, անոր հօր ընտանիքը եւ ամբողջ ունեցածը. ան Իսրայէլի մէջ բնակեցաւ մինչեւ այսօր, որովհետեւ պահեց այն՝ լրտեսները՝ որ Յետու ղրկեր էր Երիքովը լրտեսելու համար:

26 Այդ ատեն Յետու երդում ըրաւ՝ ըսելով. «Տէրոջ առջեւ անիծեալ ըլլայ այն մարդը, որ պիտի կանգնի եւ այս Երիքով քաղաքը կառուցանէ. իր անդրանիկով անոր հիմը պիտի դնէ, ու իր կրտսերով անոր դռները կանգնեցնէ»:

27 Այսպէս Տէրը Յետուի հետ էր, եւ անոր համբաւը ամբողջ երկրին մէջ փոխարածուեցաւ:

ԱԶԱՐԻ ՄԵՂԸԸ

7

Բայց Իսրայէլի որդիները նզովքին հանդէպ ուխտագանց եղան. քանի որ Յուդայի տոհմէն՝ Զարայի որդիին՝ Զաբդի որդիին Զարմի որդին Աքար նզովուածէն առաւ: Ուստի Տէրոջ բարկութիւնը Իսրայէլի որդիներուն դէմ բորբոքեցաւ:

2 Յետու Երիքովէն մարդիկ ղրկեց դէպի Գայի, որ Բեթաւանի մօտ է՝ Բեթէլի արեւելեան կողմը, ու անոնց ըսաւ. «Բարձրացէ՛ք եւ այդ երկիրը լրտեսեցէք»: Այդ մարդիկն ալ բարձրացան ու Գային լրտեսեցին: 3 Ապա Յետուի վերադարձան եւ անոր ըսին. «Ամբողջ ժողովուրդը թող չբարձրանայ. միայն երկու կամ երեք հազարի չափ մարդիկ թող բարձրանան ու Գային զարնեն: Ամբողջ ժողովուրդը հոն տանելով մի՛ յոգնեցներ, քանի անոնք փոքրաթիւ են»: 4 Ուստի ժողովուրդէն երեք հազարի չափ մարդիկ հոն բարձրացան, բայց Գայիի մարդոց առջեւէն փախան: 5 Գայիի մարդիկը անոնցմէ երեսունվեց մարդու չափ զարկին, որովհետեւ զանոնք դրան առջեւէն մինչեւ Սեբարիմ հալածեցին, ու զառիվայրին վրայ զանոնք զարկին. ուստի ժողովուրդին սիրտը հալեցաւ եւ ջուրի պէս եղաւ:

6 Յետու իր հանդերձները պատռեց, Տէրոջ տապանակին առջեւ երեսի վրայ գետին ինկաւ մինչեւ իրիկուն, թէ՛ ինք, եւ թէ Իսրայէլի երէցները, ու իրենց գլուխին վրայ հող քանցեցին: 7 Յետու ըսաւ. «Ո՛հ, Տէ՛ր Եհովա, ինչո՞ւ այս ժողովուրդը Յորդանանի այս

⁹ Եբբ.՝ լրաբերները

¹⁰ Եբբ.՝ անդրանիկին վրայ

¹¹ Եբբ.՝ կրտսերին վրայ

¹² Եբբ.՝ եղաւ

¹³ Կամ՝ Զամբրիի

¹⁴ Եբբ.՝ բարձրացուցին

կողմը անցուցիր, որպէսզի մեզ Ամորհացիներուն ձեռքը մատնես եւ մեզ կորսնցնես. երանի՛ թէ հաւանելով Յորդանանի միւս կողմը մնայինք: **8** Ո՛հ, Տէ՛ր, Իսրայէլ իր թշնամիներուն առջեւ Կռնակ դարձնելէն ետք՝ **ա՛լ** ես ի՞նչ ըսեմ. **9** որովհետեւ Զանանացիներն ու երկրին բոլոր բնակիչները լսելով՝ մեզ պիտի շրջապատեն, եւ մեր անուընդ երկրի վրայէն պիտի ջնջեն. այն ատեն քու մեծ անունիդ համար ի՞նչ պիտի ընես»:

10 Տէրը Յեսուի ըսաւ. «Ոտքի՛ ելիր. ինչո՞ւ այսպէս երեսիդ վրայ ինկեր ես. **11** Իսրայէլ մեղանչեց, եւ անոնց պատուիրած ուխտս անտեսեցին. որովհետեւ նզովուածէն առին, գողցան, ստեցին ու իրենց առարկաներուն մէջ դրին: **12** Ուստի Իսրայէլի որդիները պիտի չկարենան իրենց թշնամիներուն առջեւ կանգնիլ. իրենց թշնամիներուն առջեւ կռնակ պիտի դարձնեն՝ քանի որ նզովուած եղան, եւ ա՛լ ձեզի հետ պիտի չըլլամ՝ եթէ դուք նզովուածը ձեր մէջէն չբնաջնջէք: **13** Ոտքի՛ ելիր, ժողովուրդը սրբացո՛ւր ու ըսէ՛. «Վաղուան համար դուք ձեզ սրբացուցէ՛ք. որովհետեւ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կ'ըսէ. "Ո՛վ Իսրայէլ, քու մէջդ նզովուած կայ. թշնամիներուդ առջեւ պիտի չկարենաս կանգնիլ, մինչեւ որ նզովուածը ձեր մէջէն չվերցնէք"⁴: **14** Ուստի առտուն ներկայացէ՛ք ձեր տոհմերով. Տէրը ո՛ր տոհմը որ **վիճակով** բռնէ, անհկա՛ իր գերդաստաններով թող ներկայանայ. Տէրը ո՛ր գերդաստանը որ բռնէ, անհկա՛ իր ընտանիքներով թող ներկայանայ. ու Տէրը ո՛ր ընտանիքը որ բռնէ, անհկա՛ իր մարդոցմով թող ներկայանայ: **15** Ո՛վ որ նզովուածով բռնուի, կրակով պիտի այրուի, թէ՛ ինք եւ թէ իր ամբողջ ունեցածը. քանի որ Տէրոջ ուխտը անտեսեց ու Իսրայէլի մէջ անզգամութիւն գործեց»:

16 Ուստի Յեսու առտուն՝ կանուխ ելաւ, եւ Իսրայէլը իր տոհմերով ներկայացուց. Յուդայի տոհմը բռնուեցաւ: **17** Յուդայի գերդաստանները ներկայացուց, ու Զարայեաններու գերդաստանը բռնուեցաւ: Զարայեաններու գերդաստանը իր մարդոցմով ներկայացուց, եւ Զաբդի բռնուեցաւ: **18** Յետոյ անոր ընտանիքը իր մարդոցմով ներկայացուց, ու Յուդայի տոհմէն՝ Զարայի որդիին Զաբդի որդիին Զարմիի որդիին Աքար բռնուեցաւ: **19** Հետեւաբար Յեսու Աքարի ըսաւ. «Որդի՛ս, կ'աղերսե՛մ, Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն փա՛ռք տուր, եւ **մեղքդ** անոր խոստովանէ՛. քու ըրածդ այժմ ինծի իմացո՛ւր, ինձմէ մի՛ պահեր»:⁵ **20** Աքար Յեսուի պատասխանելով՝ ըսաւ. «Ի՛րապէս Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն դէմ մեղանչեցի: «Ահա՛ւասիկ ինչ որ» ըրի.– **21** աստիճան մէջ վայելչագեղ Բաբելոնի վերարկու մը, երկու հարիւր սիկղ արծաթ ու յիսուն սիկղ կշռող ոսկի լեզու մը տեսայ, անոնց ցանկացի, զանոնք առի. ահա՛ անոնք հողին տակ թաղուած են՝ իմ վրանիս մէջտեղը, եւ արծաթը անոր տակն է»:⁶ **22** Յեսու պատգամաւորներ դրկեց՝ որ վրանը վազեցին, ու ահա՛ **անոնք** իր վրանին մէջ թաղուած էին, արծաթն ալ անոր տակն էր: **23** Զանոնք վրանին մէջտեղէն առին, Յեսուի եւ ամբողջ Իսրայէլի որդիներուն բերին, ու զանոնք Տէրոջ առջեւ դրին:

24 Այն ատեն Յեսու եւ իրեն հետ ամբողջ Իսրայէլը՝ Զարայեան Աքարը առին, նաեւ արծաթը, վերարկուն, ոսկի լեզուն, անոր որդիները, աղջիկները, արջառները, էջերը, ոչխարները, վրանը եւ ամբողջ ունեցածը, ու զանոնք Աքովրի հովիտը բարձրացուցին: **25** Յեսու ըսաւ. «Ինչո՞ւ դուն մեզ դժբախտացուցիր. Տէրն **ալ** քեզ պիտի դժբախտացնէ

⁴ Եբր.՝ ծոծրակ

⁵ Եբր.՝ զօրաւոր մարդոցմով

⁶ Եբր.՝ Սա՛պէս եւ սա՛պէս

այսօր», եւ ամբողջ Իսրայէլը զայն՝ քարկոծեց: Զանոնք քարկոծելէ ետք՝ կրակով այրեցին, **26** յետոյ անոր վրայ մեծ քարակոյտ մը կանգնեցուցին՝ որ կը կենայ մինչեւ այսօր: Հետեւաբար Տէրը իր Էբորբոքած բարկութիւնը՝ կասեցուց: Ասոր համար այդ տեղին անունը՝ Աքրովրի հովիտ կոչուեցաւ մինչեւ այսօր:

ԳԱՅԻԻ ԳՐԱԽՈՒՄՆ ՈՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

8

Տէրը Յեսուի ըսաւ. «Մի՛ վախնար ու մի՛ զարհուրիր. ա՛նք թեզի հետ ամբողջ պատերազմի ժողովուրդը, կանգնէ՛ եւ բարձրացի՛ր դէպի Գայի: Նայէ՛, Գայիի թագաւորը, անոր ժողովուրդը, անոր քաղաքն ու անոր երկիրը քու ձեռքդ մատնեցի: **2** Գայիի եւ անոր թագաւորին ըրէ՛ ինչպէս որ Երիքովի ու անոր թագաւորին ըրիր. միա՛յն անոր ւաւորը եւ անոր անասունները ձեզի համար կողոպտեցէք: Զաղաքին ետեւի կողմէն դարա՛ն դիր»:**3** Ուստի Յեսու եւ ամբողջ պատերազմի ժողովուրդը կանգնեցան, որպէսզի դէպի Գայի բարձրանան. Յեսու երեսուն հազար մարդ – զօրաւոր կտրիճներ – ընտրեց ու զանոնք գիշերը ղրկեց: **4** Անոնց պատուիրեց. «Նայեցէ՛ք, դուք քաղաքին ետեւէն՝ այդ քաղաքին համար դարան պիտի մտնէք. քաղաքէն շատ մի՛ հեռանաք, եւ բոլո՛րդ ալ պատրաստ եղէք: **5** Ես քաղաքին պիտի մօտենամ՝ ինձի հետ եղող ամբողջ ժողովուրդով, ու երբ անոնք դուրս ելլեն՝ մեր դիմաց, առաջին անգամին պէս, անոնց առջեւէն պիտի փախչինք: **6** Անոնք մեր ետեւէն դուրս պիտի ելլեն, մինչեւ որ զանոնք քաղաքէն «հեռացնենք: Արդարեւ անոնք պիտի ըսեն. “Մեր առջեւէն փախան՝ առաջին անգամին պէս, ու մենք անոնց առջեւէն պիտի փախչինք: **7** Այն ատեն դարանէն՝ Էլէ՛ք ու քաղաքը գրաւեցէ՛ք”, քանի Տէրը՝ ձեր Աստուածը զայն ձեր ձեռքը պիտի մատնէ: **8** Երբ քաղաքը գրաւէք, քաղաքը կրակով վառեցէք. Տէրոջ հրամանին համաձայն ըրէք: Նայեցէ՛ք, ձեզի պատուիրեցի»:**9** Յեսու զանոնք ղրկեց, եւ անոնք գացին դարանը մտնելու Բեթէլի ու Գայիի մէջտեղ, Գայիի արեւմտեան կողմը: Յեսու այդ գիշեր ժողովուրդին մէջ իջեւանեցաւ:

10 Յեսու առտուն՝ կանուխ ելաւ, ժողովուրդը աչքէ անցուց, ու ժողովուրդին առջեւէն դէպի Գայի բարձրացաւ, ինք եւ Իսրայէլի երէցները: **11** Իրեն հետ եղող ամբողջ պատերազմի ժողովուրդն ալ բարձրացաւ, մօտեցաւ, քաղաքին դիմաց հասաւ ու Գայիի հիւսիսային կողմը բանակեցաւ. անոնց եւ Գայիի մէջտեղ ձոր մը կար: **12** Յեսու հինգ հազարի չափ մարդ առաւ ու զանոնք դարանի մէջ դրաւ Բեթէլի եւ Գայիի մէջտեղ, քաղաքին արեւմտեան կողմը: **13** Երբ ժողովուրդը – ամբողջ բանակը – քաղաքին հիւսիսային կողմը դրին, իսկ իրենց դարանակալները՝ քաղաքին արեւմտեան կողմը, Յեսու այդ գիշերը հովիտին մէջտեղը գնաց:

14 Երբ Գայիի թագաւորը **ասիկա** տեսաւ, քաղաքին մարդիկը շտապեցին ու կանուխ

¹ Եբր.՝ քարերով քարկոծեց
² Եբր.՝ բարկութեան բորբոքումը
³ Այսինքն՝ Դժբախտութեան
⁴ Եբր.՝ դուրս քաշենք
⁵ Եբր.՝ կանգնեցէ՛ք ու քաղաքին տիրացէ՛ք
⁶ Կամ՝ Գայիի

ելան. ինք եւ իր ամբողջ ժողովուրդը դուրս ելան՝ Իսրայէլի դիմաց, որպէսզի **սահմանուած** ատենին դաշտին վրայ պատերազմին. սակայն չէր գիտեր թէ քաղաքին ետեւը իրեն համար դարան **դրուած էր: 15** Յետու եւ ամբողջ Իսրայէլը զիրենք անոնց առջեւ պարտուած **ձեւացնելով՝** անապատի ճամբան փախան: **16** Քաղաքին մէջ եղող ամբողջ ժողովուրդը **՝կանչուեցաւ՝** որպէսզի զանոնք հետապնդեն, ու Յետուն հետապնդելով՝ քաղաքէն **հեռացան: 17** Գայիի եւ Բեթէլի մէջ մարդ չմնաց, որ դուրս չելլէ՝ Իսրայէլի ետեւէն. ուստի քաղաքը բաց թողուցին ու Իսրայէլը հետապնդեցին:

18 Տէրը Յեսուի ըսաւ. «Ձեռքդ եղող տէգը երկարէ՛ դէպի Գայի, քանի որ զայն քու ձեռքդ պիտի մատնեմ»:^ա Յետու ձեռքը եղած տէգը դէպի քաղաքը երկարեց. **19** դարանակալները շուտով իրենց տեղէն կանգնեցան՝ երբ ան իր ձեռքը երկարեց, վազեցին, քաղաքը մտան եւ զայն գրաւեցին. ապա շտապելով քաղաքը կրակով վառեցին: **20** Գայիի մարդիկը իրենց ետեւը դարձան ու նայեցան, եւ ահա՛ քաղաքին մուխը մինչեւ երկինք կը բարձրանար. հոս կամ հոն փախչելու ^գզօրութիւնը չունէին, որովհետեւ անապատը փախչող ժողովուրդն ալ զինք հետապնդողներուն դէմ դարձաւ: **21** Երբ Յետու եւ ամբողջ Իսրայէլը տեսան թէ դարանակալները քաղաքը գրաւեցին ու քաղաքին մուխը կը բարձրանար, վերադարձան եւ Գայիի մարդիկը զարկին: **22** Միւսներն ալ քաղաքէն դուրս ելան՝ իրենց դիմաց. ուստի **Գայիի մարդիկը,** մէկ կողմէն ասոնք ունենալով, ու միւս կողմէն ալ՝ անոնք, Իսրայէլացիներուն մէջտեղը մնացին, որոնք զիրենք զարկին՝ մինչեւ որ իրենցմէ ^բնչ մէկ վերապրող կամ ազատած մնաց: **23** Գայիի թագաւորը ողջ բռնեցին ու զայն Յեսուի ներկայացուցին:

24 Երբ Իսրայէլացիները Գայիի բոլոր բնակիչները ամբողջովին ջարդեցին դաշտավայրին վրայ, **այն** անապատին մէջ՝ ուր զիրենք հալածեր էին, եւ անոնք բոլորն ալ սուրի բերանէ իյնալով սպառեցան, բոլոր Իսրայէլացիները Գայի վերադարձան ու զայն սուրի բերանէ անցուցին: **25** Այդ օրը ինկածները, թէ՛ **այր** մարդիկ եւ թէ՛ կիներ, տասներկու հազար էին, **այսինքն** Գայիի բոլոր մարդիկը: **26** Յետու իր ձեռքը՝ որով տէգը երկարած էր՝ ետ չքաշեց, մինչեւ որ Գայիի բոլոր բնակիչները անճիտեց: **27** Իսրայէլացիները միայն անասուններն ու քաղաքին ակարը իրենց համար կողոպտեցին, Տէրոջ Յեսուի հրամայած խօսքին համեմատ: **28** Յետու Գային այրեց, եւ զայն ^բմշտնջենաւոր փլատակ ըրաւ, մինչեւ այսօր **տեւող** ամայութիւն: **29** Գայիի թագաւորը ծառէ մը կախեց՝ մինչեւ իրիկուն. երբ արեւը մայր մտաւ, Յետու հրամայեց որ անոր դիակը ծառէն իջեցնեն. զայն քաղաքին դրան մուտքը նետեցին ու անոր վրայ մեծ քարակոյտ մը կանգնեցուցին, **որ կը կենայ** մինչեւ այսօր:

ՕՐԷՆԸԸ ԿԸ ԿԱՐԴԱՅՈՒԻ ԳԵԲԱՂ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

30 Այն ատեն Յետու զոհասեղան մը կառուցանեց Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն, Գեբաղ լեռան վրայ, **31** ինչպէս Տէրոջ ծառան՝ Մովսէս Իսրայէլի որդիներուն պատուիրեր էր: Մովսէսի Օրէնքի գիրքին մէջ գրուածին համաձայն՝ **Յետու այս** զոհասեղանը ^բանտաշ

^ա Կամ՝ աղաղակով կանչուեցաւ

^բ Եբր.՝ դուրս հանուեցան

^գ Եբր.՝ ձեռքը

^դ Եբր.՝ յաւիտենական

^ե Եբր.՝ ամբողջ

քարերէ կառուցանեց, որոնց երկաթ Բոլպած չէր, եւ անոր վրայ Տէրոջ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցանեցին: 32 Եւ հոն՝ այդ քարերուն վրայ գրեց Մովսէսի Օրէնքի գիրքին օրինակը, որ ան Իսրայէլի որդիներուն առջեւ գրեր էր: 33 Ամբողջ Իսրայէլը, նաեւ իր երէցները, ոստիկաններն ու դատաւորները, տապանակին մէկ կողմը եւ միւս կողմը կայնած էին, Տէրոջ ուխտին տապանակը կրող Ղեւտացի քահանաներուն առջեւ, թէ՛ գաղթականները եւ թէ բնիկները: Անոնց կէսը Գարիգին լերան դիմաց կայնեցաւ, ու կէսն ալ՝ Գեբաղ լերան դիմաց, ինչպէս Տէրոջ ծառան՝ Մովսէս նախապէս պատուիրեր էր, որպէսզի Իսրայէլի ժողովուրդը օրհնեն: 34 Յետոյ Օրէնքին բոլոր խօսքերը կարդաց, թէ՛ օրհնութիւնները եւ թէ անէծքները, ամէն ինչ որ գրուած էր Օրէնքի գիրքին մէջ: 35 Մովսէսի բոլոր պատուիրածներէն բնա՛ւ խօսք մը չմնաց, որ Յեսու չկարդայ Իսրայէլի ամբողջ համախմբումին, նաեւ անոնց կիներուն ու մանուկներուն, եւ անոնց մէջ շրջող գաղթականներուն առջեւ:

ԽԵՒԱՅԻՆԵՐԸ ԿԸ ԽԱԲԵՆ ՅԵՍՈՒՆ

9

Երբ Յորդանանի այս կողմը եղող բոլոր թագաւորները, որ լեռնակողմը, դաշտագետինը եւ Մեծ ծովուն ամբողջ եզերքը՝ մինչեւ Լիբանանի դիմաց կը բնակէին, այսինքն՝ Զետացիները, Ամորհացիները, Զանանացիները, Փերեզացիները, Խեւացիներն ու Յեբուսացիները, այս բաները լսեցին, 2 միաբանութեամբ հաւաքուեցան՝ որպէսզի Յեսուի եւ Իսրայէլի դէմ պատերազմին:

3 Գաբաւոնի բնակիչներն ալ լսեցին ինչ որ Յեսու Երիքովի ու Գայիի ըրեր էր. 4 բայց իրենք խորամանկութեամբ վարուեցան: Գացին պաշարներ պատրաստեցին, եւ իրենց էշերուն վրայ մաշած քուրձեր ու մաշած, ճեղքուած եւ կարկտնուած գինիի տիկեր Բորին. 5 իրենց ոտքերուն կօշիկները մաշած ու կարկտնուած էին, եւ իրենց վրայի հանդերձներն ալ մաշած էին. իրենց պաշար առած ամբողջ հացը չորցած ու մզլոտած էր: 6 Յետոյ Յեսուի բանակավայրը գացին՝ Գաղգաղայի մէջ, եւ անոր ու Իսրայէլի մարդոց ըսին. «Մենք հեռաւոր երկրէ կու գանք. ուստի հիմա մեզի հետ դաշի՛նք կնքեցէք»: 7 Բայց Իսրայէլի մարդիկը այդ Խեւացիներուն ըսին. «Թերեւս դուք մեր մէջ բնակիք, ձեզի հետ ի՞նչպէս դաշի՛նք կնքենք»: 8 Իսկ անոնք Յեսուի ըսին. «Մենք քու ծառաներդ ենք»: Յեսու անոնց ըսաւ. «Դուք ո՞վ էք, եւ ուրկէ՞ կու գաք»: 9 Անոնք ալ անոր ըսին. «Զու ծառաներդ շատ հեռաւոր երկրէ եկած են, քու Աստուծոյդ՝ Եհովայի անունին համար, քանի որ անոր համբաւը ու Եգիպտոսի մէջ բոլոր ըրածները լսեցինք, 10 նաեւ անոր բոլոր ըրածները Յորդանանի միւս կողմը բնակող Ամորհացիներուն երկու թագաւորներուն՝ Եսեբոնի Սեհոն թագաւորին, եւ Աստարոսի բնակող Բասանի Ովգ թագաւորին: 11 Ուստի մեր երէցներն ու մեր երկրին բոլոր բնակիչները մեզի ըսին. “Ձեզի հետ պաշար առէք ճամբորդութեան համար, զանոնք դիմաւորելո՛ւ գացէք, եւ անոնց ըսէ՛ք. “Մենք ձեր ծառաներն ենք, հիմա մեզի հետ դաշի՛նք կնքեցէք”»: 12 Այն օրը երբ մենք դուրս ելանք՝ ձեզի գալու համար, մեր այս պաշարի հացը մեր տուններէն տա՛ք առինք. իսկ հիմա ահա՛ չորցած ու մզլոտած է: 13 Այս գինիի տիկերը նո՛ր էին՝ երբ լեցուցինք, բայց ահա՛ ճեղքուեցան. մեր այս

Բ Երբ.՝ երերցուած
Մ Երբ.՝ կապուած
Բ Երբ.՝ առին

հանդերձները եւ կօշիկները մաշեցան՝ շատ երկար ճամբորդութեան պատճառով»։ 14 «Անոնց պաշարին նայելով՝ այդ մարդիկը ընդունեցին», առանց «Տէրոջ խորհուրդ» հարցնելու։ 15 Յետու անոնց հետ խաղաղութիւն ըրաւ, եւ անոնց հետ դաշինք կնքեց որ զանոնք ողջ թողու. համայնքին իշխաններն ալ անոնց երդում ըրին։

16 Անոնց հետ դաշինք կնքելէն երեք օր ետք լսեցին թէ անոնք իրենց հարեւաններն են ու իրենց մէջ կը բնակին։ 17 Իսրայէլի որդիները մեկնելով՝ երրորդ օրը անոնց քաղաքները մտան. անոնց քաղաքները՝ Գաբաւոն, Կեփիրա, Բերովթ եւ Կարիաթ-Յարիմ էին։ 18 Իսրայէլի որդիները զանոնք չզարկին, որովհետեւ համայնքին իշխանները անոնց երդում ըրեր էին Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն անունով. բայց ամբողջ համայնքը իշխաններուն դէմ տրտնջեց։

19 Բոլոր իշխանները ամբողջ համայնքին ըսին. «Մենք Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն անունով անոնց երդում ըրինք. ուստի հիմա չենք կրնար անոնց դպչիլ։ 20 Անոնց սա՛ ընենք. զանոնք ողջ թողունք, որպէսզի մեր վրայ զայրոյթ չըլլայ այն երդումին պատճառով՝ որ անոնց ըրինք»։ 21 Ուստի իշխանները անոնց ըսին. «Թող ո՞ղջ մնան, բայց ամբողջ համայնքին փայտահատներն ու ջրկիրները ըլլան»։ Ուստի փայտահատներ եւ ջրկիրներ եղան, ինչպէս իշխանները անոնց ըսեր էին։

22 Յետոյ Յետու զանոնք կանչեց ու անոնց խօսեցաւ՝ ըսելով. «Ինչո՞ւ մեզ խաբեցիք եւ ըսիք թէ “ձեզմէ շատ հեռու ենք”, մինչդեռ մեր մէջ կը բնակիք։ 23 Ուրեմն դուք հիմա անիծեալ էք, ու իմ Աստուծոյս տան համար ձեզմէ ստրուկ – փայտահատ եւ ջրկիր – թող չպակսի»։ 24 Անոնք ալ Յետուի պատասխանեցին. «Որովհետեւ քու ծառաներուդ ստուգապէս հաղորդուեցաւ թէ քու Աստուածդ՝ Եհովան, իր ծառային՝ Մովսէսի պատուիրեր էր այս ամբողջ երկիրը ձեզի տալ եւ այս երկրին բոլոր բնակիչները ձեր առջեւէն բնաջնջել. ուստի մենք ձեր պատճառով մեր անձերուն համար շատ վախցանք, ու այս արարքը ըրինք։ 25 Ահա՛ հիմա քու ձեռքդ ենք. ըրէ՛ ինչ որ քեզի հաճելի եւ ուղիղ կը թուի» ընել մեզի»։ 26 Ուստի անոնց այնպէս ըրաւ. զանոնք Իսրայէլի որդիներուն ձեռքէն ազատեց, որպէսզի զանոնք չմեռցնեն։ 27 Յետու նոյն օրը զանոնք փայտահատ ու ջրկիր ըրաւ, որպէսզի մինչեւ այսօր ծառայեն համայնքին եւ Տէրոջ զոհասեղանին՝ Տէրոջ ընտրելիք տեղը։

ԱՍՏՐՉԱՅԻՆԵՐԸ ԿԸ ՊԱՐՏՈՒԻՆ

10

Երբ Երուսաղէմի Ադոնիսեդէկ թագաւորը լսեց թէ Յետու Գային գրաւեց ու զայն ւաւերեց, թէ Գայիի եւ անոր թագաւորին ըրաւ այնպէս՝ ինչպէս Երիքովի ու անոր թագաւորին ըրեր էր, եւ թէ Գաբաւոնի բնակիչները Իսրայելացիներուն հետ խաղաղութիւն ըրին ու անոնց մէջ են, 2 ինք եւ իր ժողովուրդը չափազանց վախցան, քանի որ Գաբաւոն թագաւորանիստ քաղաքի մը պէս մեծ քաղաք մըն էր. ան Գայիէն մեծ էր, ու անոր բոլոր մարդիկը զօրաւոր էին։ 3 Հետեւաբար Երուսաղէմի Ադոնիսեդէկ թագաւորը՝ Զեբրոնի Հոհամ թագաւորին, Յերիմութի Փիրամ թագաւորին, Լաքիսի Յափիէ թագաւորին ու Էզդոնի Դաբիր թագաւորին մարդ ղրկեց՝ ըսելով. 4 «Իմ քո՛վս բարձրացէք եւ ինծի՛ օգնեցէք, որպէսզի Գաբաւոնը զարնենք. քանի որ Յետուի հետ ու Իսրայէլի որդիներուն

4 Կամ՝ Իսրայէլի մարդիկը անոնց պաշարէն առին
5 Եբր.՝ Տէրոջ բերանը
6 Եբր.՝ աչքերուդ լաւ եւ ուղիղ է

ՅԵՍՈՒԻ ԳԻՐԸ

հետ խաղաղութիւն ըրաւ»։ **5** Ուստի Ամորհացիներուն հինգ թագաւորները, Երուսաղէմի թագաւորը, Զերրոնի թագաւորը, Յերիմութի թագաւորը, Լաքիսի թագաւորն ու Էզղոնի թագաւորը հաւաքուեցան, եւ իրենք ու իրենց բոլոր բանակները բարձրացան, Գաբաւոնի դիմաց բանակեցան եւ անոր դէմ պատերազմեցան։

6 Գաբաւոնի մարդիկը Յեսուի մարդը ղրկեցին՝ Գաղգաղայի բանակավայրը, ըսելով. «Զու ծառաներէդ ձեռքդ մի՛ քաշեր, շուտով մեր քով բարձրացիր, ազատէ՛ մեզ եւ օգնէ՛ մեզի. քանի որ լեռնաբնակ Ամորհացիներուն բոլոր թագաւորները մեզի դէմ հաւաքուեցան»։ **7** Ուստի Յեսու Գաղգաղայէն բարձրացաւ, ինք եւ իրեն հետ ամբողջ պատերազմի ժողովուրդը, բոլոր զօրաւոր կտրիճները։ **8** Տէրը Յեսուի ըսաւ. «Անոնցմէ մի՛ վախնար, քանի զանոնք քու ձեռքդ մատնեցի. անոնցմէ ո՛չ մէկը պիտի կարենայ առջեւդ կայնիլ»։ **9** Յեսու Գաղգաղայէն ամբողջ գիշերը «քալելով՝ յանկարծակի անոնց վրայ հասաւ։ **10** Տէրը զանոնք խուճապի մատնեց Իսրայէլի առջեւ, որ զանոնք Գաբաւոնի մօտ մեծ Բպարտութեան մատնեց՝, զանոնք Բեթորոն բարձրացող ճամբային վրայ հալածեց, եւ զանոնք մինչեւ Ազեկա ու Մակեդա գարկաւ։ **11** Երբ անոնք Իսրայէլի առջեւէն կը փախչէին եւ Բեթորոնի «գառիվայրէն կ'իջնէին», Տէրը անոնց վրայ երկինքէն կարկուտի մեծ քարեր նետեց մինչեւ Ազեկա, ու մեռան։ Կարկուտի քարերէն մեռնողները՝ Իսրայէլի որդիներուն սուրով մեռցուցածներէն շատ էին։

12 Այն ատեն Յեսու Տէրոջ հետ խօսեցաւ, այն օրը երբ Տէրը Ամորհացիները Իսրայէլի որդիներուն ձեռքը մատնեց, եւ Իսրայէլի Էառջեւ ըսաւ. «Արե՛ւ, Գաբաւոնի՛ դիմաց Կեցիր. իսկ դուն՝ լուսի՛ն՝ Այեղոնի՛ հովիտին դիմաց»։ **13** Ուստի արեւը Կեցաւ եւ լուսինը իր տեղը մնաց մինչեւ որ ազգը իր թշնամիներէն վրէժ առաւ։ Միթէ ասիկա Ուղիղին գիրքին մէջ գրուած չէ՞. արեւը երկինքին մէջտեղը մնաց, ու լման մէկ օրուան չափ մայր մտնելու չփութաց։ **14** Ատոր պէս օր չեղաւ, ո՛չ անկէ առաջ եւ ո՛չ անկէ ետք, երբ Տէրը մարդու մը խօսքը մտիկ ըրաւ. որովհետեւ Տէրը Իսրայէլի համար պատերազմեցաւ։

ՅԵՍՈՒ ԳԵՐԻ Կ'ԱՌՆԷ ՀԻՆԳ ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

15 Ապա Յեսու եւ իրեն հետ ամբողջ Իսրայէլը Գաղգաղա՝ բանակավայրը վերադարձան։ **16** Հինգ թագաւորները փախան ու Մակեդա՝ քարայրին մէջ պահուրտեցան։ **17** Ուստի Յեսուի իմացուցին. «Այդ հինգ թագաւորները Մակեդա գտնուեցան՝ քարայրին

^ա Եբբ.՝ բարձրանալով

^բ Եբբ.՝ հարուածով գարկաւ

^գ Եբբ.՝ գառիվայրն էին

^դ Եբբ.՝ առջեւ

^ե Եբբ.՝ աչքերուն

^զ Եբբ.՝ լուռ կեցիր

^է Եբբ.՝ լուռ կեցաւ

^ը Եբբ.՝ կանգ առաւ

^թ Եբբ.՝ կանգ առաւ

մէջ պահուրտած»։ 18 Յեսու ըսաւ. «Զարայրին բացուածքը մե՛ծ քարեր գլորեցէք եւ անոր քով մարդի՛կ դրէք, որպէսզի զանոնք պահպանեն։ 19 Բայց դուք մի՛ կենաք. ձեր թշնամիները հետապնդեցէ՛ք ու անոնց վերջամնացները զարկէ՛ք. անոնց մի՛ թոյլատրէք որ իրենց քաղաքները մտնեն, քանի Տէրը՝ ձեր Աստուածը զանոնք ձեր ձեռքը մատնեց»։ 20 Երբ Յեսու Իսրայէլի որդիներուն հետ ւաւարտեց զանոնք յոյժ մեծ պարտութեան մատնելը՝ մինչեւ որ զանոնք հատցուց, անոնցմէ՝ ⁴մնացած վերապրողները պարսպապատ քաղաքներու մէջ մտան։ 21 Ամբողջ ժողովուրդը խաղաղութեամբ Յեսուի վերադարձաւ, Մակեդա՝ բանակավայրը, եւ Իսրայէլի որդիներուն դէմ ո՛չ մէկը իր լեզուն շարժեց։

22 Յետոյ Յեսու ըսաւ. «Զարայրին բերա՛նը բացէք, քարայրէն այդ հինգ թագաւորները հանեցէ՛ք ու ինծի՛ բերէք»։ 23 Այդպէս ալ ըրին. քարայրէն այդ հինգ թագաւորները – Երուսաղէմի թագաւորը, Զեբրոնի թագաւորը, Յերիմութի թագաւորը, Լաքիսի թագաւորն ու Էզդոնի թագաւորը – հանեցին եւ անոր տարին։ 24 Երբ այս թագաւորները Յեսուի առջեւ ելան, Յեսու Իսրայէլի բոլոր մարդիկը կանչեց, ու իրեն հետ գացող պատերազմիկներու մեծաւորներուն ըսաւ. «Մօտեցէ՛ք եւ ձեր ոտքերը այս թագաւորներուն վիզերո՛ւն վրայ դրէք»։ Անոնք ալ մօտեցան ու իրենց ոտքերը անոնց վիզերուն վրայ դրին։ 25 Յեսու անոնց ըսաւ. «Մի՛ վախնաք եւ մի՛ զարհուրիք, ուժովցէ՛ք ու քա՛ջ եղէք. քանի որ Տէրը ա՛յսպէս պիտի ընէ ձեր բոլոր թշնամիներուն, որոնց դէմ դուք պիտի պատերազմիք»։ 26 Ապա Յեսու զանոնք զարկաւ, զանոնք մեռցուց, եւ զանոնք հինգ ծառէ կախեց. ծառերուն վրայ մինչեւ իրիկուն կախուած մնացին։ 27 Արեւին մայր մտնելու ատենը Յեսու հրամայեց որ զանոնք ծառերէն իջեցնեն ու զանոնք նետեն քարայրին մէջ՝ ուր պահուրտած էին։ Զարայրին բացուածքը մեծ քարեր դրին, որոնք կը կենան մինչեւ այսօր։

ՅԵՍՈՒ ԿԸ ԳՐԱԻԷ ԱԻԵԼԻ ԵՐԿԻՐՆԵՐ

28 Յեսու նոյն օրը Մակեդան ալ գրաւեց. զայն սուրի բերանէ անցուց, անոր թագաւորն ու անոր մէջ գտնուած բոլոր անձերը անճիտեց, եւ ո՛չ մէկ վերապրող թողուց։ Մակեդայի թագաւորին ալ ըրաւ այնպէս՝ ինչպէս Երիքովի թագաւորին ըրեր էր։

29 Յետոյ Յեսու եւ իրեն հետ ամբողջ Իսրայէլը՝ Մակեդայէն Լեբնա անցան, ու Լեբնայի դէմ պատերազմեցան։ 30 Տէրը զայն ալ անոր թագաւորով Իսրայէլի ձեռքը մատնեց։ Զայն ու անոր մէջ գտնուած բոլոր անձերը սուրի բերանէ անցուցին եւ ո՛չ մէկ վերապրող թողուցին։ Անոր թագաւորին ըրին այնպէս՝ ինչպէս Երիքովի թագաւորին ըրեր էին։

31 Ապա Յեսու ու իրեն հետ ամբողջ Իսրայէլը՝ Լեբնայէն Լաքիս անցան, եւ անոր դիմաց բանակելով՝ անոր դէմ պատերազմեցան։ 32 Տէրը Լաքիսը Իսրայէլի ձեռքը մատնեց, ու երկրորդ օրը զայն գրաւելով՝ զայն եւ անոր մէջ գտնուած բոլոր անձերը սուրի բերանէ անցուցին, ինչպէս Լեբնայի ըրեր էին։

33 Այն ատեն Գագերի Հորամ թագաւորը բարձրացաւ՝ Լաքիսի օգնելու։ Յեսու զայն ու անոր ժողովուրդը զարկաւ, այնպէս որ անոնցմէ ո՛չ մէկ վերապրող մնաց։

34 Յետոյ Յեսու եւ իրեն հետ ամբողջ Իսրայէլը՝ Լաքիսէն Էզդոն անցան, ու անոր դիմաց բանակելով՝ անոր դէմ պատերազմեցան։ 35 Նոյն օրը զայն գրաւելով՝ սուրի բերանէ անցուցին, եւ Յեսու նոյն օրը անոր մէջ գտնուած բոլոր անձերը անճիտեց, ինչպէս Լաքիսի ըրեր էր։

36 Ապա Յեսու ու իրեն հետ ամբողջ Իսրայէլը՝ Էզդոնէն Զեբրոն բարձրացան, եւ անոր

⁴ Եբր.՝ վերապրած

դէմ պատերազմեցան: **37** Զայն գրաւելէ ետք՝ սուրի բերանէ անցուցին զայն, անոր թագաւորը, անոր բոլոր քաղաքներն ու անոր մէջ **գտնուած** բոլոր անձերը, **եւ** ո՛չ մէկ վերապրող թողուցին, ինչպէս Էգլոնի ըրեր էին. այսպէս զայն ու անոր մէջ **գտնուած** բոլոր անձերը անճիտեցին:

38 Յետոյ Յեսու եւ իրեն հետ ամբողջ Իսրայէլը՝ Դաբիր վերադարձան ու անոր դէմ պատերազմեցան: **39** Զայն, անոր թագաւորը եւ անոր բոլոր քաղաքները գրաւեցին, զանոնք սուրի բերանէ անցուցին ու անոր մէջ **գտնուած** բոլոր անձերը անճիտեցին, **եւ** ո՛չ մէկ վերապրող թողուցին. ինչպէս Զերոնի ըրեր էին, եւ ինչպէս Լեբնայի ու անոր թագաւորին ըրեր էին, նոյնպէս ալ Դաբիրի եւ անոր թագաւորին ըրին:

40 Յեսու ամբողջ երկիրը զարկաւ.– լեռնակողմը, հարաւային կողմը, դաշտագետինը եւ լեռներուն ստորոտը, նաեւ անոնց բոլոր թագաւորները. ո՛չ մէկ վերապրող թողուց, հապա ամէն շնչաւոր անճիտեց, ինչպէս Տէրը՝ Իսրայէլի Աստուածը պատուիրեր էր: **41** Յեսու զանոնք զարկաւ Կադէս-Քառնեայէն մինչեւ Գազա, եւ ամբողջ Գոսոմի երկիրը՝ մինչեւ Գաբաւոն: **42** Յեսու մէկ անգամէն գրաւեց այս բոլոր թագաւորներն ու անոնց երկիրը, քանի որ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը կը պատերազմէր Իսրայէլի համար: **43** Յետոյ Յեսու եւ իրեն հետ ամբողջ Իսրայէլը Գաղգաղա՝ բանակավայրը վերադարձան:

ՅԵՍՈՒ ԿԸ ՅԱՂԹԷ ՅԱԲԻՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԴԱՇՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ

11

Երբ Հասորի Յաբին թագաւորը **այս բաները** լսեց, Մադոնի Յոբաբ թագաւորին, Սամրոնի թագաւորին, Աքսափի թագաւորին, **2** ու հիւսիսային լեռները, Զեներէթի հարաւային դաշտը, դաշտագետինը, եւ արեւմտեան կողմը՝ Դովրի բարձունքին վրայ եղող թագաւորներուն, **3** արեւելեան ու արեւմտեան կողմը եղող Զանանացիներուն, Ամորհացիներուն, Զետացիներուն, Փերեզացիներուն ու լեռնաբնակ Յերուսացիներուն, եւ Հերմոնի ստորոտը՝ Մասփայի երկիրը եղող Խեւացիներուն **մարդ** ղրկեց: **4** Անոնք ալ իրենց բոլոր բանակներով դուրս ելան – շատ ժողովուրդով՝ ծովեզերքի աւազին չափ բազմաթիւ, յոյժ շատ ձիերով ու կառքերով: **5** Երբ այս բոլոր թագաւորները իրարու հանդիպեցան, գացին եւ Մառոնի ջուրին քով միասին բանակեցան, որպէսզի Իսրայէլի դէմ պատերազմին:

6 Տէրը Յեսուի ըսաւ. «ՄԱՆՈՆԳՄԷ մի՛ վախճար, քանի որ վաղը՝ այս ատեն՝ ես անոնց բոլորը Իսրայէլի առջեւ մեռցուելու պիտի մատնեմ. անոնց ձիերուն ջիղերը պիտի կտրես ու կառքերն ալ կրակով պիտի այրես»: **7** Ուստի Յեսու, եւ իրեն հետ ամբողջ պատերազմի ժողովուրդը, յանկարծակի անոնց վրայ հասան Մառոնի ջուրին քով, եւ անոնց վրայ ^բյարձակեցան: **8** Տէրը զանոնք Իսրայէլի ձեռքը մատնեց, որ զանոնք զարկաւ ու զանոնք հալածեց մինչեւ Մեծն Սիդոն, մինչեւ Մասրեփոթ-Մայիմ, եւ մինչեւ Մասփայի հովիտը՝ դէպի արեւելք. զանոնք զարկին՝ մինչեւ որ անոնցմէ ո՛չ մէկ վերապրող թողուցին: **9** Յեսու անոնց ըրաւ **այնպէս՝** ինչպէս Տէրը իրեն հրամայեր էր. անոնց ձիերուն ջիղերը կտրեց, ու կառքերը կրակով այրեց:

10 Այդ ատեն Յեսու վերադարձաւ, Հասորը գրաւեց եւ անոր թագաւորը սուրով ^գմեռցուց, որովհետեւ առաջ՝ Հասոր այդ բոլոր թագաւորութիւններուն գլուխն էր: **11** Անոր

^ա Եբր.՝ Անոնց երեսէն

^բ Եբր.՝ ինկան

^գ Եբր.՝ զարկաւ

մէջ **գտնուած** բոլոր անձերը սուրի բերանէ անցուցին եւ անճիտեցին. ո՛չ մէկ շնչաւոր մնաց, ու Հասորը կրակով այրեց: **12** Յեսու այդ թագաւորներուն բոլոր քաղաքները գրաւեց, անոնց բոլոր թագաւորները **բռնեց** եւ զանոնք սուրի բերանէ անցընելով անճիտեց, ինչպէս Տէրոջ ծառան՝ Մովսէս պատուիրեր էր: **13** Սակայն Իսրայէլ ո՛չ մէկը այրեց այն քաղաքներէն՝ որ իրենց ⁷հողաբլուրներուն վրայ կը կենային, բացի Հասորէն. Յեսու միայն զայն այրեց: **14** Իսրայէլի որդիները իրենց համար կողոպտեցին այդ քաղաքներուն ամբողջ ակարը եւ անասունները, իսկ բոլոր մարդիկը սուրի բերանէ անցուցին, մինչեւ որ զանոնք բնաջնջեցին **եւ** ո՛չ մէկ շնչաւոր թողուցին: **15** Ինչպէս Տէրը իր ծառային՝ Մովսէսի պատուիրեր էր, նոյնպէս ալ Մովսէս Յեսուի պատուիրեց, ու Յեսու այնպէս ըրաւ. Տէրոջ Մովսէսի բոլոր պատուիրածներէն ոչինչ զանց ըրաւ:

ՅԵՍՈՒԻ ԳՐԱԻԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

16 Յեսու այդ ամբողջ երկիրը առաւ.— լեռնակողմը, ամբողջ հարաւային կողմը, ամբողջ Գոստմի երկիրը, դաշտագետինը եւ դաշտը, ու Իսրայէլի լեռը եւ անոր դաշտագետինը, **17** Սէիր բարձրացող Զալակ լեռնէն մինչեւ Լիբանանի հովիտին մէջ եղող Բահաղ-Գադը՝ Հերմոն լեռան ստորոտը. անոնց բոլոր թագաւորները բռնեց, զանոնք զարկաւ եւ զանոնք մեռցուց: **18** Յեսու այս բոլոր թագաւորներուն դէմ երկար ժամանակ պատերազմեցաւ: **19** Գաբաւոնի մէջ բնակող Խեւացիներէն զատ՝ Իսրայէլի որդիներուն հետ խաղաղութիւն ընող ո՛չ մէկ քաղաք կար. բոլորն ալ պատերազմով առնուեցան: **20** Արդարեւ անոնց սիրտին կարծրանալն ու պատերազմով Իսրայէլի հանդիպիլը Տէրոջմէն եղաւ, որպէսզի զանոնք նզովէ, **այսինքն** առանց ողորմութեան զանոնք բնաջնջէ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

21 Այդ ատեն Յեսու գնաց ու լեռներէն – Զեբրոնէն, Դաբիրէն, Անաբէն, Յուդայի բոլոր լեռներէն եւ Իսրայէլի բոլոր լեռներէն – Ենակիմները կոտորեց. Յեսու զանոնք իրենց քաղաքներով միասին անճիտեց: **22** Իսրայէլի որդիներուն երկրին մէջ Ենակիմներէն ո՛չ մէկը մնաց. միայն Գազայի, Գէթի ու Ասեդովթի մէջ անոնցմէ մնացին:

23 Այսպէս՝ Յեսու ամբողջ երկիրը գրաւեց, ինչպէս Տէրը Մովսէսի ըսեր էր: Յեսու զայն Իսրայէլի ժառանգութիւն տուաւ՝ անոնց տոհմերուն բաժիններուն համեմատ, ու երկիրը պատերազմէն հանդարտեցաւ:

ՄՈՎՍԷՍԷՆ ՊԱՐՏՈՒԱԾ ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

12

Ահա՛ւասիկ **այդ** երկրին թագաւորները, որ Իսրայէլի որդիները զարկին եւ անոնց երկրին տիրացան՝ Յորդանանի միւս կողմը, դէպի արեւելք, Առնոն վտակէն մինչեւ Հերմոն լեռը՝ արեւելեան կողմին ամբողջ դաշտով.— **2** Ամորհացիներուն Սեհոն թագաւորը, որ Եսեբոն կը բնակէր, Գաղաադի կէսին վրայ կը տիրէր, Առնոն վտակին եզերքը եղող Արոէրէն ու ձորին մէջտեղէն մինչեւ Ամմոնի որդիներուն սահմանը եղող Յաբոկ վտակը. **3** Նաեւ դաշտին վրայ **կը տիրէր**, մինչեւ Զեներէթի ծովը՝ դէպի արեւելք, ու մինչեւ դաշտին ծովը՝ **այսինքն** Աղի ծովը՝ արեւելեան կողմը, Բեթեսիմոթի ճամբան, իսկ հարաւային կողմը՝ Ասեդովթ-Փասգայի ստորոտը: **4** **Ահա՛ւասիկ** հսկաներու մնացորդէն Բասանի Ովգ թագաւորին հողամասը. ան Աստարովթի եւ Եդրայիի մէջ կը բնակէր, **5** ու Հերմոն լեռան, Սելքայի եւ ամբողջ Բասանի վրայ կը տիրէր՝ մինչեւ Գեսուրացիներուն ու Մաքաթացիներուն հողամասը, նաեւ Գաղաադի կէսին վրայ, որ

⁷ **Եբր.**՝ հողակոյտերուն

ՅԵՍՈՒԻ ԳԻՐԸԸ

Եսերոնի Սեհոն թագաւորին հողամասն էր: **6** Տէրոջ ծառան՝ Մովսէս ասոնք զարկաւ Իսրայէլի որդիներուն հետ, եւ Տէրոջ ծառան՝ Մովսէս **ասոնց երկիրները** իբր ստացուածք տուաւ Ռուբէնեաններուն, Գադեաններուն ու Մանասէի կէս տոհմին:

ՅԵՍՈՒԷՆ ՊԱՐՏՈՒԱԾ ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

7 Ահա՛ւասիկ **այդ** երկրին թագաւորները, որ Յեսու եւ Իսրայէլի որդիները զարկին Յորդանանի այս կողմը՝ դէպի արեւմուտք, Լիբանանի հովիտին մէջ եղող Բահաղ-Գադէն մինչեւ Զալակ լեռը, որ դէպի Սէիր կը բարձրանայ (Յեսու Իսրայէլի տոհմերուն իբր ստացուածք տուաւ՝ իրենց բաժիններուն համեմատ՝ **8** լեռնակողմը, դաշտագետինը, դաշտերուն մէջ, լեռներուն ստորոտները, անապատը եւ հարաւային կողմը **բնակող** Զետացիներուն, Ամորհացիներուն, Զանանացիներուն, Փերեզացիներուն, Խեւացիներուն եւ Յերուսացիներուն **երկիրները**).– **9** Երիքովի թագաւորը՝ մէկ, Բեթէլի քով եղող Գայիի թագաւորը՝ մէկ, **10** Երուսաղէմի թագաւորը՝ մէկ, Զեբրոնի թագաւորը՝ մէկ, **11** Յերիմութի թագաւորը՝ մէկ, Լաքիսի թագաւորը՝ մէկ, **12** Էգլոնի թագաւորը՝ մէկ, Գագերի թագաւորը՝ մէկ, **13** Դաբիրի թագաւորը՝ մէկ, Գադերի թագաւորը՝ մէկ, **14** Հորմայի թագաւորը՝ մէկ, Արադի թագաւորը՝ մէկ, **15** Լեբնայի թագաւորը՝ մէկ, Ողողոմի թագաւորը՝ մէկ, **16** Մակեդայի թագաւորը՝ մէկ, Բեթէլի թագաւորը՝ մէկ, **17** Թափուայի թագաւորը՝ մէկ, Ոփերի թագաւորը՝ մէկ, **18** Ափէկի թագաւորը՝ մէկ, Լասարոնի թագաւորը՝ մէկ, **19** Մադոնի թագաւորը՝ մէկ, Հասորի թագաւորը՝ մէկ, **20** Սամրոն-Մառոնի թագաւորը՝ մէկ, Աքսափի թագաւորը՝ մէկ, **21** Թանաքի թագաւորը՝ մէկ, Մակեդոնի թագաւորը՝ մէկ, **22** Կադէսի թագաւորը՝ մէկ, Կարմեղոս եղած Յեկնամի թագաւորը՝ մէկ, **23** Դովրի բարձունքին վրայ եղած Դովրի թագաւորը՝ մէկ, Գաղգաղա եղած Գոյիմի թագաւորը՝ մէկ, **24** Թերսայի թագաւորը՝ մէկ. **այս** բոլոր թագաւորներուն **թիւը**՝ երեսունմէկ էր:

ԴԵՌ ԶԱՌՆՈՒԱԾ ԵՐԿԻՐՆԵՐ

13

Երբ Յեսու ծերացաւ եւ «տարիքը յառաջացաւ», Տէրը անոր ըսաւ. «Դուն ծերացար ու տարիքդ յառաջացաւ, բայց **տակաւից** յոյժ շատ երկիր կը մնայ տիրանալու: **2** Ահա՛ւասիկ մնացած երկիրը.– Փղշտացիներուն բոլոր շրջանները եւ ամբողջ Գեսուրը, **3** Եգիպտոսի դիմաց եղող Սիովրէն մինչեւ Զանանացիներուն սեպուած Ակկարոնի հողամասը՝ դէպի հիւսիս, **այսինքն**՝ Փղշտացիներուն հինգ նախարարութիւնները, Գագացիներուն, Ազովտացիներուն, Ասկաղոնացիներուն, Գեթացիներուն, ու Ակկարոնացիներուն, նաեւ Աւացիներուն **երկիրը**: **4** Հարաւային կողմէն՝ Զանանացիներուն ամբողջ երկիրն ու Սիդոնացիներու Սէարան, մինչեւ Ափէկ **ու** մինչեւ Ամորհացիներուն հողամասը. **5** Գեբաղացիներուն երկիրը եւ ամբողջ Լիբանանը, դէպի արեւելք, Հերմոն լեռան ստորոտը եղող Բահաղ-Գադէն մինչեւ Եմաթի մուտքը. **6** բոլոր լեռնաբնակները՝ Լիբանանէն մինչեւ Մասրեփոթ-Մայիմ, բոլոր Սիդոնացիները: Ե՛ս զանոնք պիտի վտարեմ Իսրայէլի որդիներուն առջեւէն. դուն միայն այս **երկիրը** իբր ժառանգութիւն վիճակով բաժնէ Իսրայելացիներուն, ինչպէս քեզի պատուիրեցի»:

ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

7 «Ուստի հիմա այս երկիրը իբր ժառանգութիւն բաժնէ՛ ինը տոհմին ու Մանասէի կէս

^u **Եբր.**՝ օրերը գացին

ՅԵՍՈՒՒ ԳԻՐԸԸ

տոհմին»: **8 Արդարեւ** Ռուբէնեաններն ու Գադեանները անոր **միւս կէսին** հետ ստացան իրենց ժառանգութիւնը, որ Մովսէս անոնց տուաւ Յորդանանի միւս կողմը՝ դէպի արեւելք, Տէրոջ ծառային Մովսէսի տուածին համեմատ... **9** Առնոն վտակին եզերքը եղող Արոէրէն, ձորին մէջտեղը եղող քաղաքէն եւ ամբողջ Մեդաբայի լեռնադաշտէն մինչեւ Դերոն. **10** Եսեբոնի մէջ թագաւորող Ամորհացիներու Սեհոն թագաւորին բոլոր քաղաքները՝ մինչեւ Ամմոնի որդիներուն հողամասը. **11** Գադաադը, Գեսուրացիներուն ու Մաքաթացիներուն հողամասը, ամբողջ Հերմոն լեռը եւ ամբողջ Բասանը՝ մինչեւ Սելքա. **12** Բասանի մէջ՝ Ուզֆի ամբողջ թագաւորութիւնը, որ Աստարովթի ու Եդրայիի մէջ կը թագաւորէր **եւ** հսկաներու մնացորդէն ինք մնացած էր. բայց Մովսէս զանոնք զարկաւ ու վտարեց: **13** Սակայն Իսրայէլի որդիները Գեսուրացիներն ու Մաքաթացիները չվտարեցին. ուստի Գեսուրացիներն ու Մաքաթացիները մինչեւ այսօր Իսրայէլացիներուն մէջ կը բնակին: **14** Միայն Ղեւիի տոհմին ժառանգութիւն չտուաւ. անոր ժառանգութիւնը Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն **մատուցանուած** պատարագներն են, ինչպէս անոր ըսեր էր:

ՌՈՒԲԷՆԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

15 Մովսէս Ռուբէնի որդիներուն տոհմին **ժառանգութիւն** տուաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ: **16** Անոնց հողամասը՝ Առնոն վտակին եզերքը եղող Արոէրէն, ու ձորին մէջտեղը եղող քաղաքէն մինչեւ Մեդաբայի քով՝ ամբողջ լեռնադաշտը եղաւ, **17** նաեւ Եսեբոնը եւ անոր լեռնադաշտին բոլոր քաղաքները՝ Դերոն, Բամոթ-Բահաղ, Բեթ-Բահաղ-Մէոն, **18** Յասսա, Կադեմոթ, Մեփայաթ, **19** Կարիաթեմ, Սեբամա, Սարեթ-Սահառ՝ Բեմակ լեռան վրայ, **20** Բեթփէոփր, Ասեղովթ-Փասգա, Բեթեսիմոթ, **21** լեռնադաշտին բոլոր քաղաքներն ու Ամորհացիներու Սեհոն թագաւորին ամբողջ թագաւորութիւնը, որ Եսեբոնի մէջ կը թագաւորէր: Մովսէս զայն զարկաւ Մադիամի իշխաններուն՝ Եւիի, Րոկոմի, Սուրի, Ուրի եւ Ռոբէի հետ, **որոնք** Սեհոնի Գնախարարներն **էին ու այդ** երկրին մէջ կը բնակէին: **22** Իսրայէլի որդիները Բեթփէոփրէն Բադաամ դիւթն ալ սուրով մեռցուցին՝ իրենց **միւս** մեռցուցածներուն հետ: **23** Յորդանանը՝ **իր** եզերքով՝ Ռուբէնի որդիներուն սահմանը եղաւ: Այս է Ռուբէնի որդիներուն ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, **այս** քաղաքներն ու անոնց անանները:

ԳԱԴԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

24 Մովսէս Գադի տոհմին, Գադի որդիներուն, **ժառանգութիւն** տուաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ: **25** Անոնց հողամասը՝ Յագեր, բոլոր Գադաադի քաղաքները եւ Ամմոնի որդիներուն երկրին կէսը եղաւ՝ մինչեւ Արոէր, որ Ռաբբայի դիմաց է, **26** նաեւ Եսեբոնէն մինչեւ Մասփայի Ռամովթը ու Բոտանիմ, եւ Մանայիմէն մինչեւ Դաբիրի սահմանը, **27** իսկ հովիտին մէջ՝ Բեթարամ, Բեթնամրա, Սոկքովթ ու Սափոն՝ Եսեբոնի Սեհոն թագաւորին թագաւորութեան մնացորդը, Յորդանանը՝ **իր** եզերքով՝ մինչեւ Զեներէթի ծովուն ծայրը, Յորդանանի միւս կողմը՝ դէպի արեւելք: **28** Այս է Գադի որդիներուն ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, **այս** քաղաքներն ու անոնց անանները :

ՄԱՆԱՍԷԻ ԿԷՍ ՏՈՂՄԻՆ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

^բ Կամ՝ հովիտի

^գ Եբր.՝ օծեալներն

29 Մովսէս Մանասէի կէս տոհմին **ալ ժառանգութիւն** տուաւ, որ Մանասէի որդիներուն կէս տոհմին եղաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ: 30 Անոնց հողամասը՝ Մանայիմէն **սկսեալ**՝ ամբողջ Բասանը եղաւ.– Բասանի Ովգ թագաւորին ամբողջ թագաւորութիւնը, ու Յայիրի բոլոր գիւղաքաղաքները՝ որ Բասանի մէջ են, վաթսուն քաղաք: 31 Գաղաադի կէսը, Աստարովթ ու Եդրայի, Ովգի թագաւորութեան քաղաքները՝ Բասանի մէջ, Մանասեան Մաքիրի որդիներուն եղան, **այսինքն** Մաքիրի որդիներուն կէսին՝ իրենց գերդաստաններուն համեմատ:

32 Ասոնք են **այն քաղաքները**, որ Մովսէս իբր ժառանգութիւն տուաւ Մովաբի դաշտերուն մէջ, Երիքովի **դիմաց**՝ Յորդանանի միւս կողմը, դէպի արեւելք: 33 Բայց Մովսէս Ղեւիի տոհմին ժառանգութիւն չտուաւ. անոնց ժառանգութիւնը Տէրը՝ Իսրայէլի Աստուածն էր, ինչպէս անոնց ըսեր էր:

ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԵՐԿՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

14

Ահա՛ւասիկ Զանանի երկրին մէջ Իսրայէլի որդիներուն ժառանգած **տեղերը**, որ Եդիազար քահանան, Նաւեան Յեսու եւ Իսրայէլի որդիներուն տոհմերուն նահապետները իբր ժառանգութիւն տուին անոնց: 2 Ինն ու կէս տոհմերուն վիճակով **տրուեցաւ** անոնց ժառանգութիւնը, ինչպէս Տէրը Մովսէսի «միջոցով հրամայեր էր. 3 քանի որ Մովսէս երկուք ու կէս տոհմերուն Յորդանանի միւս կողմը ժառանգութիւն տուեր էր, բայց անոնց մէջ՝ Ղեւտացիներուն ժառանգութիւն տուած չէր: 4 Արդարեւ Յովսէփի որդիները երկու տոհմ էին, Մանասէ ու Եփրեմ. հետեւաբար երկրին մէջ Ղեւտացիներուն բաժին չտուին, հապա միայն քաղաքներ՝ բնակելու համար, նաեւ անոնց արուարձանները՝ իրենց խաշինքին եւ ինչքին համար: 5 Իսրայէլի որդիները ըրին այնպէս՝ ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր, ու երկիրը բաժնեցին:

ԸԵՔՐՈՆ ԿԸ ՏՐՈՒՒ ԶԱՂԷԻ

6 Յուդայի որդիները Գաղգադայի մէջ Յեսուի ներկայացան, ու Կենեզեան Յեփոնէի որդին՝ Զաղէբ անոր ըսաւ. «Դուն գիտես այն խօսքը, որ Տէրը Կադէս-Բառնեայի մէջ Աստուծոյ մարդուն՝ Մովսէսի ըսաւ ինձի եւ քեզի համար: 7 Ես քառասուն տարեկան էի երբ Տէրոջ ծառան՝ Մովսէս գիս Կադէս-Բառնեայէն դրկեց՝ երկիրը լրտեսելու համար, ու սիրտիս մէջ եղածին համաձայն լուր բերի անոր: 8 Ինձի հետ բարձրացող եղբայրներս ժողովուրդին սիրտը հալեցուցին. իսկ ես Տէրոջ՝ իմ Աստուծոյս լման հետեւեցայ: 9 Նոյն օրը Մովսէս երդում ըրաւ՝ ըսելով. «Այն երկիրը՝ որուն վրայ ոտքերդ կոխած են, անշո՛ւշտ քեզի ու քու որդիներուդ յաւիտեան ժառանգութիւն պիտի ըլլայ, որովհետեւ Տէրոջ՝ իմ Աստուծոյս լման հետեւեցար»: 10 Հիմա ահա՛ Տէրը այս քառասունհինգ տարիները գիս ողջ պահած է՝ իր ըսածին համաձայն, այն **ժամանակէն** ի վեր՝ երբ Տէրը այս խօսքը Մովսէսի ըսաւ, մինչ Իսրայէլ անապատին մէջ կը քալէր. հիմա ահա՛ այսօր ութսունհինգ տարեկան եմ, 11 եւ այսօր տակաւին ուժեղ եմ, ինչպէս էի այն օրը՝ երբ Մովսէսի գիս դրկեց. ինչպէս էր ոյժս այն ատեն, հիմա ալ ոյժս նոյնպէս է՝ պատերազմելու, ելլելու եւ մտնելու համար: 12 Ուստի հիմա տո՛ւր ինձի այս լեռը, որուն համար Տէրը այդ օրը խօսեցաւ. արդարեւ դուն այդ օրը լսեցիր թէ հոն **բնակող** Ենակիմները մեծ, պարսպապատ քաղաքներ **ունին**. թերեւս Տէրը ինձի հետ ըլլայ, ու ես զանոնք վտարեմ, ինչպէս Տէրը

^u Եբր.՝ ձեռքով

ըսաւ»: **13** Յեսու զինք օրհնեց, եւ Զերրոնը իբր ժառանգութիւն տուաւ Յեփոնեան Զաղէբի: **14** Հետեւաբար Զերրոն մինչեւ այսօր Կենեզեան Յեփոնէի որդիին՝ Զաղէբի ժառանգութիւնը եղաւ, որովհետեւ Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն լման հետեւեցաւ: **15** Զերրոնի անունը առաջ ^բԿարիաթ-Արբա էր, եւ այդ Արբան Ենակիմներուն մէջ մեծ մարդ մըն էր:

Ու երկիրը պատերազմէն հանդարտեցաւ:

ՅՈՒՂԱՅԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

15

Յուդայի որդիներուն տոհմին վիճակը՝ իրենց գերդաստաններուն համեմատ՝ մինչեւ Եդովմի հողամասը կը հասնէր. հարաւային կողմէն՝ Սինի անապատը անոնց հարաւային սահմանին ծայրն էր:

2 Անոնց հարաւային սահմանը՝ Ադի ծովուն ծայրէն, այսինքն դէպի հարաւ նայող ծոցէն «կը սկսի», **3** հարաւային կողմէն Ակրաբիմի զառիվերէն դուրս ելլելով Սին կ'անցնի, ու հարաւային կողմէն Կադէս-Բառնեայ բարձրանալով Եսրոն կ'անցնի. յետոյ դէպի Ադդար բարձրանալով՝ Կարկայի կողմը կը դառնայ. **4** ապա Ասեմոնէն անցնելով Եգիպտոսի վտակէն դուրս կ'ելլէ, եւ այս սահմանը ծովը կը յանգի: Այս է ձեր հարաւային սահմանը:

5 Արեւելեան սահմանը Ադի ծովն է՝ մինչեւ Յորդանանի ծայրը:

Հիւսիսային կողմի սահմանը՝ Յորդանանի ծայրը եղող ծոցէն կը սկսի. **6** այս սահմանը մինչեւ Բեթազղա կը բարձրանայ, Բեթարաբայի հիւսիսային կողմէն կ'անցնի, եւ այս սահմանը մինչեւ Ռուբէնեան Բահանի քարը կը բարձրանայ: **7** Յետոյ այս սահմանը Աքովրի հովիտէն Դաբիր կը բարձրանայ, հիւսիսային կողմէն կը դառնայ դէպի Գաղգաղա, որ այդ վտակին հարաւային կողմը եղող Էդովմի զառիվերին դիմաց է: Այս սահմանը Ենսամիւսի ջուրէն կ'անցնի ու Ռովգէլի աղբիւրը կը յանգի. **8** այս սահմանը Ենովմի որդիին ձորէն կը բարձրանայ դէպի Յեբուսի՝ այսինքն Երուսաղէմի հարաւային կողմը. յետոյ այս սահմանը կը բարձրանայ մինչեւ այն լեռան գագաթը, որ արեւմտեան կողմէն Ենովմի ձորին դիմաց է, իսկ հիւսիսային կողմէն Ռափայիններու հովիտին ծայրն է: **9** Այս սահմանը լեռան գագաթէն մինչեւ Նափթովայի ջուրին աղբիւրը կը ^բհասնի, ու Եփրոն լեռան քաղաքներէն դուրս կ'ելլէ. ապա այս սահմանը մինչեւ Բահաղա՝ այսինքն Կարիաթ-Յարիմ կը հասնի: **10** Այս սահմանը Բահաղայէն դէպի արեւմուտք՝ Սէիրի լեռը կը դառնայ, եւ հիւսիսային կողմէն Յարիմ լեռան քովէն՝ այսինքն Զեսաղոնէն կ'անցնի, Բեթսամիւս կ'իջնէ ու Թամնայէն կ'անցնի: **11** Այս սահմանը Ակկարոնի քով դուրս կ'ելլէ՝ դէպի հիւսիս. այս սահմանը Սաքարոն հասնելով՝ Բահաղա լեռնէն կ'անցնի եւ Յաբնէլէն դուրս կ'ելլէ. այս սահմանը ծովը կը յանգի:

12 Արեւմտեան սահմանը Մեծ ծովուն եզերքն է: Այս է Յուդայի որդիներուն հողամասը՝ շրջակայքով, իրենց գերդաստաններուն համեմատ:

ԶԱՂԷՐ ԿԸ ԳՐԱԻԷ ԶԵԲՐՈՆԸ ԵՒ ԴԱԲԻՐԸ
(Դատ. 1. 11-15)

^բ Այսինքն՝ Արբայի քաղաքը
^ւ Եբր.՝ եղաւ
^բ Եբր.՝ գծուի

13 Ինչպէս Տէրը Յեսուի հրամայեր էր, Ենակի հօր՝ Արքայի քաղաքը, այսինքն Զեբրոնը բաժին տուաւ Յեփոնեան Զաղէբի՝ Յուդայի որդիներուն մէջ: 14 Զաղէբ անկէ վտարեց Ենակի երեք որդիները՝ Սէսին, Աքիմանը եւ Թուլմին, Ենակի զաւակները: 15 Յետոյ անկէ բարձրացաւ Դաբիրի բնակիչներուն դէմ. (Դաբիրի անունը առաջ Կարիաթ-Սեփեր էր.) 16 Զաղէբ ըսաւ. «Ո՛վ որ Կարիաթ-Սեփերը զարնէ ու զայն գրաւէ, աղջիկս՝ Աքսան անոր պիտի տամ իբր կին»: 17 Գոթոնիէլ, Զաղէբի եղբօր՝ Կենեզի որդին, զայն գրաւեց եւ Զաղէբ իր աղջիկը՝ Աքսան անոր տուաւ իբր կին: 18 Երբ անոր քով հասաւ, զայն դրդեց որ իր հօրմէն արտ մը խնդրէ: Իշուն վրայէն իջաւ, ու Զաղէբ իրեն ըսաւ. «Ի՞նչ կը խնդրես»: 19 Ինք ալ պատասխանեց. «Ինձի Գընժայ մը տուր. քանի ինձի հարաւային երկիր մը տուիր, ինձի Դջուրի աղբիւրներ՝ ալ տուր»: Ուստի անոր տուաւ վերին աղբիւրներն ու ստորին աղբիւրները:

ՅՈՒԴԱՅԻ ԸԱՂԱՔՆԵՐԸ

20 Ահա՛ւասիկ Յուդայի որդիներուն տոհմին ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ.–

21 Եդովմի հողամասին քով, հարաւային կողմը, Յուդայի որդիներուն տոհմին ծայրագոյն քաղաքներն են՝ Կաբեսէլէլ, Եդեր, Յագուր, 22 Կինա, Դեմոնա, Ադադա, 23 Կադէս, Հասոր, Յեթնան, 24 Զիփ, Տելէմ, Բաալոթ, 25 Հասոր-Ադաթա, Կարիոթ, Եսրոն՝, այսինքն՝ Հասոր, 26 Ամամ, Սամա, Մուլադա, 27 Ասեր-Գադդա, Եսեմոն, Բեթփաղէթ, 28 Ասեր-Սուադ, Բերսաբէ, Բագիոթիա, 29 Բահադա, Իյիմ, Ասէմ, 30 Էլթուղադ, Զեսիլ, Հորմա, 31 Սիկելակ, Մադմաննա, Սանսաննա, 32 Լաբաովթ, Սելհէմ, Ային ու Ռեմոն. բոլորը՝ քսանինը քաղաք, եւ անոնց աւանները:

33 Դաշտագետիսին մէջ՝ Եսթաւուդ, Սարաա, Ասնա, 34 Զանով, Ենգանիմ, Թափուա, Ենայիմ, 35 Յերիմութ, Ոդոդոմ, Սոքով, Ագեկա, 36 Սագարիմ, Ատիթայիմ եւ Գադերա (ու Գադերոթայիմ). տասնչորս քաղաք, եւ անոնց աւանները: 37 Սեման, Ադասա, Մագդաղգադ, 38 Դադաան, Մասփա, Յեկթովէլ, 39 Լաքիս, Բագկաթ, Էգդոն, 40 Զաբբոն, Լամաս, Զիթլիս, 41 Գադերոթ, Բեթդագոն, Նաամա ու Մակեդա. տասնվեց քաղաք, եւ անոնց աւանները: 42 Լեբնա, Եթեր, Ասան, 43 Յեփթա, Ասնա, Նեսիբ, 44 Կէիլա, Աքեզիբ ու Մարեսա. ինը քաղաք, եւ անոնց աւանները: 45 Ակկարոն՝ իր Գիւղերով ու աւաններով: 46 Ակկարոնէն մինչեւ ծովը, Ասեդովթի Էմօտերը եղող բոլոր քաղաքները՝ իրենց աւաններով: 47 Ասեդովթ՝ իր գիւղերով եւ աւաններով: Գագա՝ իր գիւղերով ու աւաններով, մինչեւ Եգիպտոսի վտակը եւ մինչեւ Մեծ ծովը՝ իր եզերքով:

48 Լեռնակողմը՝ Սամիր, Յաթիր, Սոքով, 49 Դաննա, Կարիաթ-Սաննա, այսինքն՝ Դաբիր, 50 Անաբ, Եսթեմով, Անիմ, 51 Գոսոմ, Զողոն ու Գեղոն. տասնմէկ քաղաք, եւ անոնց աւանները: 52 Երեբ, Դումա, Եսան, 53 Յանում, Բեթթափուա, Ափեկա, 54 Զամմատա,

^Գ Եբր.՝ օրհնութիւն

^Դ Կամ՝ ջրակոյտեր

^Ե Կամ՝ Կարիոթ-Եսրոն

^Զ Եբր.՝ աղջիկներով

^Է Եբր.՝ ձեռքին տակ

Կարիաթ-Արբա, այսինքն՝ Զեբրոն, ու Սիովր. ինը քաղաք, եւ անոնց ւաւանները: 55 Մաոն, Կարմեղոս, Զիփ, Յետտա, 56 Յեգրայէլ, Յեկդաամ, Զանով, 57 Կային, Գաբաա ու Թամնա. տասը քաղաք, եւ անոնց ւաւանները: 58 Աղուղ, Բեթսուր, Գեդովր, 59 Մաարաթ, Բեթանովթ ու Ելթեկոն. վեց քաղաք, եւ անոնց ւաւանները: 60 Կարիաթ-Բահաղ, այսինքն՝ Կարիաթ-Յարիմ, ու Ռաբբա. երկու քաղաք, եւ անոնց ւաւանները:

61 Անապատին մէջ՝ Բեթարաբա, Մադդին, Սեքաքա, 62 Նեբսան, Ադի քաղաքը ու Ենգադդի. վեց քաղաք, եւ անոնց ւաւանները:

63 Բայց Յուդայի որդիները չկրցան Երուսաղէմ բնակող Յերուսացիները վտարել. հետեւաբար Յերուսացիները Երուսաղէմ կը բնակին մինչեւ այսօր՝ Յուդայի որդիներուն հետ:

ԵՓՐԵՄԻ ԵՒ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՄԱՆԱՍԷԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

16

Յովսէփի որդիներուն ելած վիճակը՝ Երիքովի դիմաց եղող Յորդանանէն, Երիքովի ջուրին արեւելեան կողմէն կ'երթայ այն անապատը՝ որ Երիքովէն Բեթէլի լեռը կը բարձրանայ: 2 Սահմանը Բեթէլէն դուրս կ'ելլէ դէպի Լուզ, Ատարոթէն կ'անցնի՝ Արքիի հողամասին մօտ, 3 արեւմտեան կողմէն՝ Յեփայթիի հողամասը կ'իջնէ, մինչեւ Ստորին Բեթորոնին հողամասը ու մինչեւ Գազեր, եւ ծովը կը յանգի: 4 Յովսէփի որդիները՝ Մանասէ ու Եփրեմ՝ ա՛յս ժառանգութիւնը առին:

ԵՓՐԵՄ

5 Եփրեմի որդիներուն հողամասը՝ իրենց գերդաստաններուն համեմատ եղաւ: Անոնց ժառանգութեան սահմանը՝ արեւելեան կողմէն Ատարոթ-Ադար է, մինչեւ Վերին Բեթորոնը: 6 Սահմանը հիւսիսային կողմէն ծովը դուրս կ'ելլէ՝ Մաքմեթաթի մօտ. եւ ա՛յս սահմանը կը դառնայ դէպի արեւելք՝ մինչեւ Թէանթսելով, անկէ կ'անցնի արեւելեան կողմէն՝ դէպի Յանովէ, 7 Յանովէէն կ'իջնէ Ատարովթ ու Նաարա, Երիքովի կը հասնի եւ Յորդանանէն դուրս կ'ելլէ: 8 Ա՛յս սահմանը Թափուայէն Կանա վտակը կ'երթայ՝ արեւմտեան կողմէն, ու ծովը կը յանգի: Ա՛յս է Եփրեմի որդիներուն տոհմին ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, 9 նաեւ Եփրեմի որդիներուն համար զատուած քաղաքները՝ Մանասէի որդիներուն ժառանգութեան մէջ, ա՛յս բոլոր քաղաքները՝ իրենց ւաւաններով:

10 Անոնք Գազեր բնակող Զանանացիները չվտարեցին. հետեւաբար Զանանացիները Եփրեմի մէջ կը բնակին մինչեւ այսօր, հարկատու հպատակներ ըլլալով:

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՄԱՆԱՍԷ

17

Մանասէի տոհմին ալ վիճակ էլաւ, քանի որ ան Յովսէփի անդրանիկն էր: Մանասէի անդրանիկը՝ Մաքիր, Գաղաադի հայրը, պատերազմիկ մըն էր. ուստի Գաղաադն ու Բասանը ունեցաւ: 2 Մանասէի միւս որդիներուն ալ վիճակ էլաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ.— Աբիեզերի որդիներուն, Զեղեքի որդիներուն, Ասրիէլի որդիներուն, Սիւքէմի որդիներուն, Ոփերի որդիներուն ու Սեմիդայի որդիներուն: Ասո՛նք էին Յովսէփեան

^ա Եբր.՝ եղաւ

Մանասէի արու ^բզաւակները՝ իրենց գերդաստաններուն համեմատ: **3** Սակայն Մանասէի որդիին՝ Մաքիրի որդիին՝ Գաղաադի որդիին՝ Ոփերի որդին Սալպաադ որդիներ չունէր, հապա միայն աղջիկներ: Ահա՛ւասիկ անոր աղջիկներուն անունները.– Մահալա, Նուա, Էգդա, Մեղքա ու Թերսա: **4** Ասոնք եղիագար քահանային, Նաւեան Յեսուի եւ իշխաններուն ներկայանալով՝ ըսին. «Տէրը Սովսէսի հրամայեց որ մեզի ժառանգութիւն տրուի մեր եղբայրներուն մէջ»: Ուստի **Յեսու**^ա՝ Տէրոջ հրամանին համաձայն՝ անոնց ժառանգութիւն տուաւ իրենց հօր եղբայրներուն մէջ: **5** Մանասէի տասը բաժին ^գելաւ՝ Յորդանանի միւս կողմը եղող Գաղաադի ու Բասանի երկրէն զատ, **6** որովհետեւ Մանասէի աղջիկները անոր որդիներուն մէջ ժառանգութիւն առին. իսկ Գաղաադի երկիրը Մանասէի միւս որդիներուն եղաւ:

7 Մանասէի սահմանը ^դԱսերէն մինչեւ Մաքմեթաթ՝ եղաւ, որ Սիւքէմի դիմաց է: **Այս** սահմանը աջ կողմը կ'երթայ, դէպի Թափուայի աղբիւրին **քով** բնակողները. **8** Թափուայի երկիրը Մանասէի եղաւ, բայց Մանասէի սահմանին վրայ եղող Թափուա **քաղաքը** Եփրեմի որդիներուն եղաւ: **9 Այս** սահմանը Կանա վտակը կ'իջնէ, վտակին հարաւային կողմէն: Մանասէի քաղաքներուն մէջ՝ ասոնք Եփրեմի քաղաքներն են. Մանասէի հողամասը վտակին հիւսիսային կողմն է ու ծովը կը յանգի: **10** Հարաւային կողմը՝ Եփրեմի, իսկ հիւսիսային կողմը՝ Մանասէի ըլլալով, անոնց սահմանը ծովը եղաւ. հիւսիսային կողմը՝ Ասերի կը հասնէին, իսկ արեւելեան կողմը՝ Իսաքարի: **11** Իսաքարի ու Ասերի **հողամասերուն** մէջ՝ Մանասէ ունեցաւ Բեթսանը եւ անոր ^եգիւղերը, Յեբդաամը եւ անոր գիւղերը, Դովրի բնակիչներն ու անոր գիւղերը, Ենդովրի բնակիչներն ու անոր գիւղերը, Թանաքի բնակիչներն ու անոր գիւղերը, Մակեդոնովի բնակիչներն ու անոր գիւղերը. **այս** երեք բարձրաւանդակները: **12** Բայց Մանասէի որդիները չկրցան այս քաղաքներուն **բնակիչները** վտարել. ուստի Զանանացիները կամապաշտութեամբ այդ երկրին մէջ բնակեցան: **13** Երբ Իսրայէլի որդիները ուժովցան՝ Զանանացիներուն վրայ հարկ դրին, բայց զանոնք **խսպառ** չվտարեցին:

ԵՓՐԵՄ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԱՆԱՍԷ ԱԻԵԼԻ ՀՈՂ ԿՊԻՋԵՆ

14 Յովսէփի որդիները Յեսուի հետ խօսեցան, եւ ըսին. «Ինչո՞ւ ինձի **միայն** մէկ վիճակ ու մէկ բաժին տուիր իբր ժառանգութիւն: Ես բազմաթիւ ժողովուրդ մըն եմ. քանի Աստուած մինչեւ հիմա զիս օրհնեց»: **15** Յեսու անոնց պատասխանեց. «Եթէ դուն բազմաթիւ ժողովուրդ ես, անտա՛ռը բարձրացիր, եւ հոն քեզի համար **տե՛ղ**՝ զըրէ՛ Փերեգացիներու ու Ռափայիններու երկրին մէջ, եթէ Եփրեմի լեռը քեզի շատ նեղ է»: **16** Յովսէփի որդիները ըսին. «Լեռը մեզի համար **բաւական** չէ, ու հովիտի երկրին մէջ, Բեթսանի մէջ եւ անոր գիւղերուն մէջ, ու Յեզրայէլի հովիտին մէջ բնակող բոլոր Զանանացիները երկաթէ կառքեր ունին»: **17** Յեսու Յովսէփի տան, **այսինքն** Եփրեմի ու Մանասէի հետ խօսեցաւ՝ ըսելով. «Դուն բազմաթիւ ժողովուրդ ես, ու մեծ ոյժ ունիս. **միայն**

^բ Եբր.՝ որդիները

^գ Եբր.՝ ինկաւ

^դ Կամ՝ Ասեր-Մաքմեթաթէն

^ե Եբր.՝ աղջիկները

^զ Եբր.՝ կտրէ

մէկ վիճակ պիտի չունենաս, **18** հապա լեռը քուկդ պիտի ըլլայ. եւ քանի ան անտառ է, զայն կտրէ՛, ու մինչեւ ծայրը քուկդ թող ըլլայ. արդարեւ դուն քանանացիները անկէ պիտի վտարես, թէպէտ անոնք երկաթէ կառքեր ունին եւ ուժեղ են»:

ՄՆԱՅԵԱԼ ԵՐԿՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

18

Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը Սելովի մէջ համախմբուեցաւ, ու Հանդիպումի վրանը հոն «կանգնեցուցին. երկիրը անոնց առջեւ նուաճուեցաւ:

2 Իսրայէլի որդիներուն մէջ եօթը տոհմ մնացած էր, որոնց բաժնուած չէր իրենց ժառանգութիւնը: **3** Ուստի Յեսու Իսրայէլի որդիներուն ըսաւ. «Մինչեւ ե՞րբ անհոգ պիտի ըլլաք եւ պիտի չերթաք տիրանալու այն երկրին, որ Տէրը՝ ձեր հայրերուն Աստուածը ձեզի տուաւ: **4 Ամէն մէկ** տոհմէ երե՛ք մարդ ^բընտրեցէք, որպէսզի զանոնք ղրկեմ. անոնք պիտի կանգնին, **այդ** երկրին մէջ պիտի շրջին, զայն իրենց ժառանգութեան համեմատ արձանագրեն, **յետոյ** ինծի գան: **5** Զայն եօթը մասի պիտի բաժնեն. Յուդա իր հողամասին մէջ պիտի կենայ՝ հարաւային կողմը, եւ Յովսէփի տունը իր հողամասին մէջ պիտի կենայ՝ հիւսիսային կողմը: **6** Ուստի երկիրը արձանագրեցէ՛ք՝ եօթը բաժինով, ու հոս՝ ինծի՛ բերէք **արձանագրութիւնը**, որպէսզի հոս՝ ձեզի համար վիճակ ձգեմ Տէրոջ՝ մեր Աստուծոյն առջեւ: **7** Սակայն Ղեւտացիները ձեր մէջ բաժին չունին, որովհետեւ Տէրոջ քահանայութիւնն է անոնց ժառանգութիւնը: Իսկ Գադ, Ռուբէն եւ Մանասէի կէս տոհմը իրենց ժառանգութիւնները ստացած են Յորդանանի միւս կողմը, դէպի արեւելք. Տէրոջ ծառան՝ Մովսէս իրենց տուաւ զանոնք»:

8 Այդ մարդիկը կանգնեցան ու գացին: Յեսու **այդ** երկիրը արձանագրելու գացողներուն պատուիրեց. «Գացէ՛ք, **այդ** երկրին մէջ շրջելով զայն արձանագրեցէ՛ք եւ ինծի՛ վերադարձէք, որպէսզի հոս՝ Սելովի մէջ ձեզի համար վիճակ ձգեմ Տէրոջ առջեւ»: **9 Այդ** մարդիկը գացին, **այդ** երկրին մէջէն անցան, զայն եօթը բաժինով արձանագրեցին գիրքի մը մէջ՝ **իր** քաղաքներուն համեմատ, ու Յեսուի եկան՝ Սելովի բանակավայրը: **10** Յեսու Սելովի մէջ անոնց համար վիճակ ձգեց Տէրոջ առջեւ, ու հոն՝ Յեսու երկիրը բաժնեց Իսրայէլի որդիներուն՝ իրենց բաժիններուն համեմատ:

ԲԵՆԻԱՄԻՆԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

11 Նախ՝ Բենիամինի որդիներուն տոհմին վիճակը ելաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ: Իրենց վիճակին հողամասը՝ Յուդայի որդիներուն եւ Յովսէփի որդիներուն մէջտեղը ելաւ: **12** Անոնց հիւսիսային կողմի սահմանը Յորդանանէն «կը սկսի»: **այս** սահմանը հիւսիսային կողմէն Երիքովի քով կը բարձրանայ, դէպի արեւմուտք՝ լեռը կը բարձրանայ, ու Բեթաւանի անապատը կը յանգի: **13** Սահմանը անկէ Լուզ կ'անցնի, Լուզի՝ այսինքն Բեթէլի հարաւային կողմէն. **այս** սահմանը Ատարոթ-Ադար կ'իջնէ, որ Ստորին Բեթորոնին հարաւային կողմը եղող լերան քովն է: **14 Այս** սահմանը արեւմտեան ծայրը ^բհասնելով՝ դէպի հարաւ կը դառնայ, Բեթորոնի դիմացի լեռնէն դէպի հարաւ, ու կը յանգի

^ա Եբր.՝ բնակեցուցին

^բ Եբր.՝ տուէք

^գ Եբր.՝ եղաւ

^դ Եբր.՝ գծուելով

Կարիաթ-Բահադ, որ Կարիաթ-Յարիմն է, Յուդայի որդիներուն քաղաքը: Այս է արեւմտեան կողմը: **15** Հարաւային կողմը Կարիաթ-Յարիմի ծայրէն կը սկսի. սահմանը դէպի արեւմուտք ^եկ'երթայ եւ Նափթովայի ջուրին աղբիւրէն դուրս կ'ելլէ: **16** Այս սահմանը՝ Ենովմի որդիին ձորին դիմացի լեռան ծայրը կ'իջնէ. այս ձորը Ռափայիներու հովիտին մէջ է՝ հիւսիսային կողմը: Սահմանը Ենովմի ձորէն կ'իջնէ դէպի հարաւ՝ Յեբուսի քովէն, ու Ռովգէլի աղբիւրը կ'իջնէ. **17** յետոյ դէպի հիւսիս հասնելով՝ Ենսամիւսէն դուրս կ'ելլէ, ապա Եղովմիին գառովերին դիմաց եղող Գալիլովթէն դուրս կ'ելլէ, եւ Ռուբէնեան Բահանի քարը կ'իջնէ: **18** Յետոյ Արաբայի դիմացի կողմէն դէպի հիւսիս անցնելով՝ Արաբա կ'իջնէ: **19** Ապա այս սահմանը Բեթազղայի քովէն կ'անցնի՝ դէպի հիւսիս, եւ այս սահմանը Աղի ծովուն հիւսիսային ծոցը ու Յորդանանի հարաւային ծայրը կը յանգի: Այս է հարաւային սահմանը: **20** Արեւելեան կողմի սահմանը Յորդանանն է: Այս է Բենիամինի որդիներուն ժառանգութիւնը՝ իր շրջակայ սահմաններով, անոնց գերդաստաններուն համեմատ:

21 Հետեւեալները Բենիամինի որդիներուն տոհմին քաղաքներն են՝ իրենց գերդաստաններուն համեմատ.— Երիքով, Բեթազղա, Եմեկկասիս, **22** Բեթարաբա, Սեմարիմ, Բեթէլ, **23** Աւիմ, Փարա, Եփրա, **24** Զեփարամոննա, Հոփնի ու Գաբա. տասներկու քաղաք, եւ անոնց աւանները: **25** Գաբաւոն, Ռամա, Բերովթ, **26** Մասփա, Կեփիրա, Մոսա, **27** Ռեկէմ, Յերփայէլ, Թարաղա, **28** Սելա, Էլէփ, Յեբուս, այսինքն՝ Երուսաղէմ, Գաբաաթ ու Կարիաթ. տասնչորս քաղաք, եւ անոնց աւանները: Այս է Բենիամինի որդիներուն ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ:

ՇՄԱԻՈՆԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

19

Երկրորդ վիճակը Շմաւոնի ելաւ, Շմաւոնի որդիներուն տոհմին՝ իրենց գերդաստաններուն համեմատ. անոնց ժառանգութիւնը Յուդայի որդիներուն ժառանգութեան մէջ եղաւ: **2** Իրենց ժառանգութեան մէջ սա՛քաղաքները ունեցան.— Բերսաբէ, (Սաբէ,) Մոլադա, **3** Ասերսուաղ, Բաղա, Ասէմ, **4** Էլթուղադ, Բաթուլ, Հորմա, **5** Սիկելակ, Բեթմարքաբովթ, Ասեր-Սուսա, **6** Բեթլաբաւովթ եւ Սարուհէն. տասներեք քաղաք, եւ անոնց աւանները: **7** Ային, Ռեմոն, Եթեր եւ Ասան. չորս քաղաք, եւ անոնց աւանները: **8** Նաեւ այս քաղաքներուն շուրջը եղող բոլոր աւանները՝ մինչեւ ՄԲահաղէթ-Բէեր ու հարաւային Ռաման՝: Այս է Շմաւոնի որդիներուն տոհմին ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ: **9** Շմաւոնի որդիներուն ժառանգութիւնը՝ Յուդայի որդիներուն բաժինէն առնուեցաւ, քանի որ Յուդայի որդիներուն բաժինը շատ էր իրենց համար. ուստի Շմաւոնի որդիներուն ժառանգութիւնը անոնց ժառանգութեան մէջ եղաւ:

ԶԱՐՈՒՂՈՆԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

10 Երրորդ վիճակը Զաբուղոնի որդիներուն ելաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ: Անոնց ժառանգութեան սահմանը մինչեւ Սարիդ եղաւ. **11** անոնց սահմանը դէպի ծովը եւ Մարաղա կը բարձրանայ, Դաբասէթ կը հասնի, ապա Յեկնամի դիմաց եղող վտակը կը հասնի: **12** Սարիդէն դէպի արեւելք կը դառնայ՝ արեւելեան կողմը, Զասղովթ-Թաբորի

^ե Եբր.՝ դուրս կ'ելլէ

^ա Կամ՝ Բահաղէթ-Բէեր—Ռաման՝ հարաւային կողմէն

ՅԵՍՈՒԻ ԳԻՐԸԸ

սահմանը, ու Դաբարաթէն դուրս ելլելով՝ Յափիէ կը բարձրանայ. **13** անկէ դէպի արեւելք կ'անցնի՝ Գեթքոփերէն **եւ** Իթագասիներէն, ու Ռեմոն-Մեթոարէն **եւ** Նուայէն դուրս կ'ելլէ. **14** Յետոյ **այս** սահմանը անոր շուրջը կը դառնայ հիւսիսային կողմէն՝ դէպի Ենաթոն, ու Յեփթայէլի ձորը կը յանգի: **15** Նաեւ Կատտաթ, Նահաղոլ, Սամրոն, Յադելա ու Բեթլեհէմ. տասներկու քաղաք, **եւ** անոնց աւանները: **16** Այս է Զաբուղոնի որդիներուն ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, այս քաղաքներն ու անոնց աւանները:

ԻՍԱԶԱՐԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

17 Չորրորդ վիճակը Իսաքարի ելաւ, Իսաքարի որդիներուն՝ իրենց գերդաստաններուն համեմատ: **18** Անոնց սահմանը ^բկ'երթայ դէպի Յեզրայէլ, Զասելովթ, Սունամ, **19** Ափերէմ, Սիան, Անարէթ, **20** Ռաբբիթ, Կեսիոն, Աբէս, **21** Ռամաթ, Ենգանիմ, Ենքադդա ու Բեթփասէս: **22** Այս սահմանը Թաբոր, Սասիմա ու Բեթսամիւս կը հասնի, **եւ** անոնց սահմանը Յորդանան կը յանգի. տասնվեց քաղաք, **եւ** անոնց աւանները: **23** Այս է Իսաքարի որդիներուն տոհմին ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, **այս** քաղաքներն ու անոնց աւանները:

ԱՍԵՐԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

24 Հինգերորդ վիճակը Ասերի որդիներուն տոհմին ելաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ: **25** Անոնց սահմանը ^գկ'երթայ դէպի՝ Զեղկաթ, Ադի, Բետէն, Աքսափ, **26** Ալամելէք, Ամադ, Մասադ, **եւ** արեւմտեան կողմէն մինչեւ Կարմեղոս ու Սիոր-Լեքնաթ կը հասնի: **27** Արեւելեան կողմէն դէպի Բեթդագոն կը դառնայ, Բեթամէկի **եւ** Նէիէլի հիւսիսային կողմէն՝ Զաբուղոն ու Յեփթայէլի ձորը կը հասնի, **եւ** ձախ կողմէն՝ Զաբողէն դուրս կ'ելլէ. **28** ապա ^կերթայ դէպի Եբրոն, Բոհոբ, Համմոն ու Կանա, մինչեւ Մեծն Սիդոն: **29** Յետոյ **այս** սահմանը դէպի Ռամա կը դառնայ՝ մինչեւ Տիւրոս պարսպապատ քաղաքը. **եւ** **այս** սահմանը դէպի Ուսա դառնալով՝ Աքեզիբի նահանգին մէջէն կը յանգի ծովը, **30** Ամմա, Ափէկ ու Բոհոբ. քսաներկու քաղաք, **եւ** անոնց աւանները: **31** Այս է Ասերի որդիներուն տոհմին ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, այս քաղաքներն ու անոնց աւանները:

ՆԵՓԹԱՂԻՄԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

32 Վեցերորդ վիճակը Նեփթաղիմի որդիներուն ելաւ, Նեփթաղիմի որդիներուն՝ իրենց գերդաստաններուն համեմատ: **33** Անոնց սահմանը Հելէփէն **եւ** Ալոնէն ^դկ'երթայ դէպի Սանանիմ, Ադամի-Նագէբ ու Յաբնէլ, մինչեւ Լակում, ու Յորդանան կը յանգի: **34** Այս սահմանը արեւմտեան կողմէն դէպի Ազանոթ-Թաբոր կը դառնայ, **եւ** անկէ դուրս կ'ելլէ դէպի Հուկոկ. հարաւային կողմէն մինչեւ Զաբուղոն կը հասնի, արեւմտեան կողմէն մինչեւ Ասեր կը հասնի, իսկ արեւելեան կողմէն՝ մինչեւ Յորդանանի Յուդան: **35** Պարսպապատ քաղաքներն են՝ Ասեդիմ, Սեր, Ամաթ, Ռեկկաթ, **36** Զեներէթ, Ադամա,

^բ Եբր.՝ եղաւ

^գ Եբր.՝ եղաւ

^դ Եբր.՝ եղաւ

Ռամա, Հասոր, 37 Կաղէս, Եդրայի, Ենհասոր, Յարոն, 38 Մակդաղիէլ, Հարէմ, Բեթանաթ ու Բեթսամիւս. տասնինը քաղաք, եւ անոնց ւաւանները: 39 Ա՛յս է Նեփթաղիմի որդիներուն տոհմին ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, այս քաղաքներն ու անոնց ւաւանները:

ԴԱՆԻ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ԵՐԿԻՐԸ

40 Եօթներորդ վիճակը Դանի որդիներուն տոհմին ելաւ՝ իրենց գերդաստաններուն համեմատ: 41 Անոնց ժառանգութեան «սահմանին մէջ են»՝ Սարաա, Եսթաւուդ, Իրսամէս, 42 Սաղաբին, Այեղոն, Յեթլա, 43 Ելոն, Թամնաթա, Ակկարոն, 44 Ելթեկէ, Գաբաթոն, Բաալթթ, 45 Եհուդ, Բանէ-Բարակ, Գեթռեմոն, 46 Սէարկոն եւ Ռակկոն, Յոպպէի դիմաց եղող հողամասով: 47 Սակայն Դանի որդիներուն հողամասը իրենց պզտիկ՝ եղաւ. ուստի Դանի որդիները բարձրացան ու Լեսէմի դէմ պատերազմեցան. զայն գրաւեցին, զայն սուրի բերանէ անցուցին, եւ անոր տիրանալով՝ անոր մէջ բնակեցան, ու Լեսէմը իրենց հօր՝ Դանի անունով Դան կոչեցին: 48 Ա՛յս է Դանի որդիներուն տոհմին ժառանգութիւնը՝ իրենց գերդաստաններուն համեմատ, այս քաղաքներն ու անոնց ւաւանները:

ԵՐԿՐԻՆ ՎԵՐՋԻՆ ՅԱՏԿԱՅՈՒՄԸ

49 Երկիրը իր սահմաններով էբաժնելը ւաւարտելէն ետք, Իսրայէլի որդիները Նաւեան Յեսուի ժառանգութիւն տուին իրենց մէջ. 50 Տէրոջ հրամանին համաձայն՝ անոր տուին իր խնդրած քաղաքը, Թամնաթ-Սարան՝ Եփրեմի լեռնակողմը. ան ալ քաղաքը կառուցանեց եւ անոր մէջ բնակեցաւ:

51 Ասոնք են այն ժառանգութիւնները, որ Եղիազար քահանան, Նաւեան Յեսու եւ Իսրայէլի որդիներուն տոհմերուն նահապետները վիճակով բաժնեցին Սելովի մէջ՝ Տէրոջ առջեւ, Հանդիպումի վրանին մուտքը. ու երկիրը բաժնելը ւաւարտեցին:

ԱՊԱՍՏԱՆԻ ԶԱՂԱՔՆԵՐԸ

20

Տէրը Յեսուի ըսաւ. 2 «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն եւ ըսէ՛. “Դուք ձեզի ապաստանի քաղաքներ՝ որոշեցէք, որոնց մասին ձեզի խօսեցայ Մովսէսի Բմիջոցով, 3 որպէսզի սխալմամբ եւ անգիտակցաբար անձ մը՝ Գսպանող մարդասպանը հո՛ն փախչի. անոնք ձեզի ապաստանարան պիտի ըլլան արիւնի վրէժխնդիրէն: 4 Մարդասպանը այդ քաղաքներէն մէկուն մէջ թող փախչի, քաղաքին դրան մուտքը կայնի, եւ իր խնդիրը այդ

² Եբր.՝ սահմանը եղաւ

³ Եբր.՝ դուրս ելաւ

⁴ Եբր.՝ ժառանգել տալը

⁵ Եբր.՝ տուէք

⁶ Եբր.՝ ձեռքով

⁷ Եբր.՝ զարնող

քաղաքին երէջներուն "հաղորդէ, որպէսզի լսեն" ու զինք քաղաքին մէջ իրենց քով
"ընդունին, անոր տեղ մը տան, եւ ան իրենց հետ բնակի: **5** Երբ արիւնի վրէժխնդիրը զայն
հետապնդէ, մարդասպանը անոր ձեռքը թող չմատնեն, քանի ան իր ընկերը
անգիտակցաբար "մեռցուցեր է. Էառաջուրնէ զայն չէր ատեր: **6** Ան այդ քաղաքը պիտի
բնակի, մինչեւ որ դատաստանի համար համայնքին ներկայանայ, ու մինչեւ որ այդ
օրերու քահանայապետը մեռնի: Յետոյ մարդասպանը թող վերադառնայ, եւ իր քաղաքն
ու տունը երթայ, **այսինքն** այն քաղաքը՝ ուրկէ փախեր էր"»:

7 Ուստի Կադէսը ^ըորոշեցին Գալիլեայի մէջ՝ Նեփթաղիմի լեռնակողմը, Սիւբէմը՝
Եփրեմի լեռնակողմը, եւ Կարիաթ-Արբան՝ այսինքն Զեբրոնը՝ Յուդայի լեռնակողմը. **8** իսկ
Երիքովի **դիմաց**՝ Յորդանանի միւս կողմը, դէպի արեւելք, Ռուբէնի տոհմէն՝ Բոսորը
տուին, անապատը՝ լեռնադաշտին մէջ, Գադի տոհմէն՝ Գաղաադի մէջ Ռամովթը, ու
Մանասէի տոհմէն՝ Բասանի մէջ Գովղանը: **9** Ասոնք են բոլոր Իսրայէլի որդիներուն
համար ու անոնց մէջ պանդխտացած գաղթականին համար սահմանուած քաղաքները,
որպէսզի ո՛վ որ սխալմամբ անձ մը ^ըսպաննէ, հո՛ն փախչի եւ արիւնի վրէժխնդիրին
ձեռքով չմեռնի, մինչեւ որ **դատաստանի համար** համայնքին ներկայանայ:

ՂԵՒՏԱՅԻՆԵՐՈՒՆ ԶԱՂԱՔՆԵՐԸ

21

Ղեւտացիներուն նահապետները՝ Եղիազար քահանային, Նաւեան Յեսուի եւ Իսրայէլի
որդիներուն տոհմերու նահապետներուն ներկայացան, **2** անոնց խօսեցան Զանանի
երկիրը՝ Սելովի մէջ, ու ըսին. «Տէրը Մովսէսի "միջոցով հրամայեց որ մեզի քաղաքներ
տրուին՝ բնակելու համար, եւ անոնց արուարձանները՝ մեր անասուններուն համար»:
3 Ուստի Իսրայէլի որդիները՝ Տէրոջ հրամանով՝ իրենց ժառանգութիւններէն սա՛
քաղաքներն ու անոնց արուարձանները տուին Ղեւտացիներուն.–

4 Առաջին վիճակը Կահաթեաններու գերդաստաններուն ելաւ: Ղեւտացիներէն Ահարոն
քահանային որդիները՝ վիճակով տասներեք քաղաք ունեցան, Յուդայի տոհմէն, Շմաւոնի
տոհմէն ու Բենիամինի տոհմէն: **5** Կահաթի միւս որդիներուն՝ վիճակով տասը քաղաք
տրուեցաւ, Եփրեմի տոհմին գերդաստաններէն, Դանի տոհմէն եւ Մանասէի կէս տոհմէն: **6**
Գերսոնի որդիներուն՝ վիճակով տասներեք քաղաք **տրուեցաւ**, Իսաքարի տոհմին
գերդաստաններէն, Ասերի տոհմէն, Նեփթաղիմի տոհմէն, ու Բասանի մէջ եղող Մանասէի
կէս տոհմէն: **7** Մերարիի որդիներուն՝ իրենց գերդաստաններուն համեմատ՝ տասներկու
քաղաք **տրուեցաւ**, Ռուբէնի տոհմէն, Գադի տոհմէն եւ Զաբուլոնի տոհմէն: **8** Իսրայէլի
որդիները այս քաղաքներն ու անոնց արուարձանները վիճակով տուին Ղեւտացիներուն,

⁷ Երբ.՝ ականջներուն հաղորդէ
⁸ Երբ.՝ հաւաքեն
⁹ Երբ.՝ զարկեր
^է Երբ.՝ երէկուրնէ ու նախորդ օրուրնէ
^ը Երբ.՝ սրբացուցին
^ը Երբ.՝ զարնէ
^ւ Երբ.՝ ձեռքով

ինչպէս Տէրը պատուիրեր էր Մովսէսի ^բմիջոցով:

9 Յուդայի որդիներուն տոհմէն ու Շմաւոնի որդիներուն տոհմէն՝ իրենց անունով ^գյիշուած սա՛ քաղաքները տուին, **10** որոնք Ահարոնի որդիներուն եղան, (**ասոնք** Ղեւիի որդիներէն եղող Կահաթեաններու գերդաստաններէն էին,) քանի որ առաջին վիճակը անոնցն էր: **11** Անոնց տուին Յուդայի լեռնակողմը եղող Ենակի հօր՝ Արբայի քաղաքը, այսինքն՝ Զեբրոնը, իր շրջակայ արուարձաններով: **12** Իսկ քաղաքին արտերն ու անոր ակունքերը Յեփոնեան Զաղէբի տուին՝ իբր ^դկալուած: **13** Ուստի Ահարոն քահանային որդիներուն տուին՝ **որպէս** մարդասպանին համար **որոշուած** ապաստանի քաղաք՝ Զեբրոնը իր արուարձաններով, նաեւ Լեբնան իր արուարձաններով, **14** Յաթիրը իր արուարձաններով, Եսթեմովը իր արուարձաններով, **15** Զողոնը իր արուարձաններով, Դաբիրը իր արուարձաններով, **16** Այինը իր արուարձաններով, Յետտան իր արուարձաններով, **եւ** Բեթսամիւսը իր արուարձաններով. այս երկու տոհմերէն ինը քաղաք **տուին**: **17** Իսկ Բենիամինի տոհմէն՝ Գաբաւոնը իր արուարձաններով, Գաբան իր արուարձաններով, **18** Անաթովթը իր արուարձաններով, ու Գաղմոնը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին**: **19** Ահարոնի որդիներուն՝ քահանաներուն բոլոր քաղաքները տասներեք քաղաք էին, եւ իրենց արուարձանները:

20 Կահաթի որդիներէն եղող միւս Ղեւտացիները – Կահաթեաններու գերդաստաններէն – Եփրեմի տոհմէն ունեցան իրենց վիճակին քաղաքները: **21** Անոնց՝ **որպէս** մարդասպանին համար **որոշուած** ապաստանի քաղաք՝ Եփրեմի լեռնակողմը եղող Սիւքէմը տուին իր արուարձաններով, նաեւ Գազերը իր արուարձաններով, **22** Կաբսեմը իր արուարձաններով, ու Բեթորոնը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին**: **23** Դանի տոհմէն՝ Ելթեկէն իր արուարձաններով, Գաբաթոնը իր արուարձաններով, **24** Այեղոնը իր արուարձաններով, ու Գեթռեմոնը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին**: **25** Մանասէի կէս տոհմէն՝ Թանաքը իր արուարձաններով, եւ Գեթռեմոնը իր արուարձաններով. երկու քաղաք **տուին**: **26** Բոլորը՝ տասը քաղաք եւ անոնց արուարձանները **տրուեցան** Կահաթի միւս որդիներուն գերդաստաններուն:

27 Ղեւտացիներու գերդաստաններէն եղող Գերսոնի որդիներուն՝ **որպէս** մարդասպանին համար **որոշուած** ապաստանի քաղաք՝ Մանասէի կէս տոհմէն **տուին** Բասանի մէջ եղող Գովղանը իր արուարձաններով, նաեւ Բեեստարան իր արուարձաններով. երկու քաղաք **տուին**: **28** Իսաքարի տոհմէն՝ Կեսիոնը իր արուարձաններով, Դաբարաթը իր արուարձաններով, **29** Յերիմուսը իր արուարձաններով, ու Ենգանիմը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին**: **30** Ասերի տոհմէն՝ Մասաղը իր արուարձաններով, **31** Աբդոնը իր արուարձաններով, Զեղկաթը իր արուարձաններով, եւ Բոհոբը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին**: **32** Նաեւ Նեփթաղիմի տոհմէն՝ **որպէս** մարդասպանին համար **որոշուած** ապաստանի քաղաք՝ Գալիլեայի մէջ եղող Կադէսը **տուին** իր արուարձաններով, նաեւ Եմաթ-Դովրը իր արուարձաններով, ու Կարթանը իր արուարձաններով. երեք քաղաք **տուին**: **33** Գերսոնեաններուն բոլոր քաղաքները՝ իրենց գերդաստաններուն համեմատ՝ տասներեք քաղաք էին, եւ անոնց արուարձանները:

34 Մնացեալ Ղեւտացիներուն – Մերարիի որդիներուն գերդաստաններուն – Զաբուղոնի տոհմէն Յեկնամը **տուին** իր արուարձաններով, Կարթան իր արուարձաններով, **35** Դեմնան իր արուարձաններով, ու Նահաղը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին**: **36**

^բ Եբր.՝ ձեռքով

^գ Եբր.՝ կոչուած

^դ Եբր.՝ իր կալուածը

Ռուբէնի տոհմէն՝ Բոսորը իր արուարձաններով, Յասսան իր արուարձաններով, **37** Կադեմոթը իր արուարձաններով, եւ Մեփայաթը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին:** **38** Գադի տոհմէն՝ որպէս մարդասպանին համար որոշուած ապաստանի քաղաք՝ Գաղաադի մէջ եղող Ռամովթը **տուին** իր արուարձաններով, նաեւ Մանայիմը իր արուարձաններով, **39** Եսեբոնը իր արուարձաններով, **ու** Յագերը իր արուարձաններով. չորս քաղաք **տուին:** **40** Ղետացիներու գերդաստաններէն մնացած Մերարիի որդիներուն բոլոր քաղաքները՝ իրենց գերդաստաններուն համեմատ՝ տասներկու քաղաք եղան, իրենց վիճակով **տրուած:**

41 Ղետացիներուն բոլոր քաղաքները՝ Իսրայէլի որդիներուն կալուածներուն մէջ՝ քառասունութ քաղաք էին, եւ անոնց արուարձանները: **42** Այս քաղաքներէն իւրաքանչիւրը իր շուրջը արուարձաններ ունէր. այս բոլոր քաղաքներն ալ այդպէս էին:

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԵՐԿՐԻՆ

43 Այսպէս՝ Տէրը Իսրայէլի տուաւ այն ամբողջ երկիրը, որուն համար անոնց հայրերուն երդում ըրեր էր՝ **իրենց** տալու, եւ անոր տիրանալով՝ անոր մէջ բնակեցան: **44** Տէրը զանոնք **իրենց** շրջակայքին մէջ հանգստացուց, անոնց հայրերուն ըրած ամբողջ երդումին համաձայն. անոնց բոլոր թշնամիներէն ո՛չ մէկը **կրցաւ** անոնց ^եդիմադրել, **քանի որ** Տէրը անոնց բոլոր թշնամիները իրենց ձեռքը մատնեց: **45** Ոչինչ ^ապակսեցաւ այն բարի խօսքերէն, որ Տէրը Իսրայէլի տան ըսեր էր. բոլորն ալ իրագործուեցան:

ՅԵՍՈՒ ՏՈՒՆ ԿԸ ՂՐԿԷ ԱՐԵՒԵԼԹԻ ՏՈՂՄԵՐԸ

22

Այն ատեն Յեսու **իրեն** կանչեց Ռուբէնեանները, Գադեաններն ու Մանասէի կէս տոհմը, **2** եւ անոնց ըսաւ. «Տէրոջ ծառան՝ Մովսէս ինչ որ ձեզի հրամայեր էր, դուք անոնց բոլորն ալ պահեցիք, ու իմ խօսքս մտիկ ըրիք ամէն բանի մէջ՝ որ ձեզի պատուիրեցի: **3** Այսչափ երկար ժամանակ՝ մինչեւ այսօր ձեր եղբայրները չլքեցիք եւ Տէրոջ՝ ձեր Աստուծոյն պատուիրանին հրահանգները պահեցիք: **4** Հիմա Տէրը՝ ձեր Աստուածը ձեր եղբայրները հանգստացուցած է, ինչպէս անոնց խոստացեր էր. ուստի հիմա վերադարձէ՛ք **ու** գացէ՛ք ձեր վրանները, ձեր կալուածին երկիրը, որ Տէրոջ ծառան՝ Մովսէս ձեզի տուաւ Յորդանանի միւս կողմը: **5** Միայն թէ շա՛տ զգուշութեամբ գործադրեցէք այն պատուիրանն ու Օրէնքը, որ Տէրոջ ծառան՝ Մովսէս ձեզի պատուիրեց, որպէսզի Տէրը՝ ձեր Աստուածը սիրէք, անոր բոլոր ճամբաներէն ընթանաք, անոր պատուիրանները պահէք, անոր յարիք ու ձեր ամբողջ սիրտով եւ ձեր ամբողջ անձով զայն պաշտէք»: **6** Յեսու զանոնք օրհնեց եւ զանոնք արձակեց. անոնք ալ իրենց վրանները գացին: **7** (Մանասէի կէս տոհմին Մովսէս **կալուած** տուեր էր Բասանի մէջ. իսկ **միւս** կէսին Յեսու **կալուած** տուաւ Յորդանանի այս կողմը՝ դէպի արեւմուտք, անոնց եղբայրներուն հետ:) Երբ Յեսու զանոնք իրենց վրանները դրկեց, զանոնք օրհնեց **8** եւ անոնց ըսաւ. «Ձեր վրանները վերադարձէ՛ք շատ ինչքով ու յոյժ շատ խաշիւքով, արծաթով, ոսկիով, պղինձով, երկաթով եւ յոյժ շատ հանդերձներով, **ու** ձեր թշնամիներուն աւարը բաժնեցէ՛ք ձեր եղբայրներուն հետ»:

9 Ուստի Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս տոհմը վերադարձան.

^ե Եբր.՝ առջեւ կայնիլ
^ա Եբր.՝ ինկաւ

Քանանի երկիրը՝ Սելովի մէջ Իսրայէլի որդիներէն «գատուեցան, որպէսզի Գաղաադի երկիրը երթան, իրենց կալուածին երկիրը, որ իբր կալուած ստացած էին Մովսէսի միջոցով՝ Տէրոջ հրամանին համաձայն:

ՋՈՂԱՍԵՂԱՆ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԶՈՎ

10 Երբ Քանանի երկրին մէջ եղող Յորդանանի մօտակայ շրջանները հասան, Ռուբէնի որդիները, Գադի որդիները եւ Մանասէի կէս տոհմը հոն՝ Յորդանանի քով՝ զոհասեղան մը կառուցանեցին, մեծ տեսքով զոհասեղան մը: 11 Իսրայէլի որդիները լսեցին Գադի որդիները, Գադի որդիներն ու Մանասէի կէս տոհմը զոհասեղան մը կառուցաներ եւ Քանանի երկրին դիմաց, Յորդանանի մօտակայ շրջանները, Իսրայէլի որդիներուն Կողմը: 12 Երբ Իսրայէլի որդիները լսեցին, Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը Սելովի մէջ համախմբուեցաւ՝ բարձրանալու եւ անոնց դէմ պատերազմելու համար: 13 Իսրայէլի որդիները Ռուբէնեաններուն, Գադեաններուն ու Մանասէի կէս տոհմին՝ Գաղաադի երկիրը ղրկեցին Եղիազարի որդին՝ Փենեհէս քահանան, 14 եւ անոր հետ տասը իշխան, այսինքն՝ Իսրայէլի բոլոր տոհմերուն իւրաքանչիւր նահապետութենէն իշխան մը. անոնցմէ իւրաքանչիւրը Իսրայէլի հազարաւորներուն մէջ նահապետութեան գլխաւոր էր: 15 Անոնք Գաղաադի երկիրը գացին՝ Ռուբէնի որդիներուն, Գադի որդիներուն ու Մանասէի կէս տոհմին, անոնց հետ խօսեցան եւ ըսին. 16 «Տէրոջ ամբողջ համայնքը սա՛կ ըսէ. “Այդ ի՞նչ ուխտագանգութիւն է՝ որ դուք Իսրայէլի Աստուծոյն հանդէպ ըրիք, այսօր Երոջմէն հեռանալով. դուք ձեզի զոհասեղան մը կառուցանելով՝ այսօր Տէրոջ դէմ ըմբոստացած էք: 17 Միթէ Փէովրի անօրէնութիւնը քի՞չ բան էր մեզի, որմէ մինչեւ այսօր չճարուեցանք, թէպէտ Տէրոջ համայնքին վրայ հարուած մը չեկաւ. 18 ու դուք այսօր Տէրոջմէն հեռացած էք: Ուստի եթէ դուք այսօր Տէրոջ դէմ ըմբոստանաք, ան ալ վաղը Իսրայէլի ամբողջ համայնքին դէմ պիտի զայրանայ: 19 Եթէ իրապէս ձեր կալուածին երկիրը անմաքուր կը համարէք, Տէրոջ կալուածին երկիրը անցէք, ուր Տէրոջ խորանը կանգնած է”, ու մեր մէջ կալուած ստացէք. բայց Տէրոջ՝ մեր Աստուծոյն զոհասեղանէն զատ զոհասեղան մը կառուցանելով ձեզի՝ մի՛ ըմբոստանաք Տէրոջ դէմ, եւ մեզի դէմ ալ մի՛ ըմբոստանաք: 20 Երբ Զարայեան Աքար նգովքին հանդէպ ուխտագանգ եղաւ, միթէ Տէրոջ զայրոյթը Իսրայէլի ամբողջ համայնքին վրայ չեղա՞ւ. եւ այդ մարդը մինակը շունչը չտուաւ իր անօրէնութեան մէջ»:

21 Ռուբէնի որդիները, Գադի որդիներն ու Մանասէի կէս տոհմը Իսրայէլի հազարաւորներուն գլխաւորներուն պատասխանեցին. 22 «Աստուածներուն Աստուածը՝

^ա Եբր.՝ գացին

^բ Եբր.՝ ձեռքով

^գ Եբր.՝ թէ կ'ըսուի. « Ահա՛

^դ Կամ՝ շրջանը

^ե Եբր.՝ Տէրոջ ետեւէն

^զ Եբր.՝ եղաւ

^է Եբր.՝ կը բնակի

^ը Կամ՝ Աստուածներուն Աստուածը Եհովա՛ն է, աստուածներուն Աստուածը Եհովա՛ն է.

Եհովան, աստուածներուն Աստուածը՝ Եհովան ի՛նք գիտէ, եւ Իսրայէլ՝ ի՛նք ալ թող գիտնայ. եթէ **այս բանը** ըմբոստութեամբ կամ Տէրոջ հանդէպ ուխտագանցութեամբ **ըրիցք**, մեզ այսօր ^բթող չփրկէ՝: **23** Եթէ մենք մեզի զոհասեղան կառուցանեցինք՝ Տէրոջմէն հեռանալու համար, կամ անոր վրայ ողջակէզ ու **հացի** ընծայ մատուցանելու համար, եւ կամ անոր վրայ խաղաղութեան զոհեր ընծայելու համար, Տէրը ի՛նք թող փնտռէ: **24** Իսկ մենք ասիկա ըրինք՝ **սա՛** բանէն մտահոգուելով. ^գմտածեցինք թէ գուցէ վաղը ձեր որդիները մեր որդիներուն ըսեն. “Դուք Տէրոջ՝ Իսրայէլի Աստուծոյն հետ ի՞նչ ունիք. **25** **Ո՛վ** Ռուբէնեաններ ու Գադեաններ, Տէրը մեր եւ ձեր միջեւ սահման մը դրաւ՝ Յորդանանը. դուք Տէրոջ **քով** ո՛չ մէկ բաժին ունիք: Այսպէս՝ ձեր որդիները մեր որդիներուն **մօտ** պիտի դադրեցնեն Տէրոջմէն վախճալը: **26** Հետեւաբար ըսինք. “Այժմ պատրաստուինք **եւ** մեզի զոհասեղան մը կառուցանենք, **բայց** ո՛չ թէ ողջակէզի համար, ո՛չ ալ զոհի համար, **27** հապա որպէսզի ան մեր ու ձեր միջեւ, եւ մեզմէ ետք՝ մեր սերունդներուն միջեւ վկայ ըլլայ, թէ մեր ողջակէզներով, մեր զոհերով ու մեր խաղաղութեան **զոհերով՝** Տէրոջ պաշտամունքը կը կատարենք իր առջեւ. որպէսզի վաղը ձեր որդիները մեր որդիներուն չըսեն. “Դուք Տէրոջ **քով** ո՛չ մէկ բաժին ունիք”: **28** Ուստի ըսինք. “Եթէ վաղը մեզի կամ մեր սերունդին **այսպէս** ըսեն, մենք **ալ** պիտի ըսենք. “Տեսէ՛ք Տէրոջ զոհասեղանին կերպարը, որ մեր հայրերը շինեցին, ո՛չ թէ ողջակէզի համար, ո՛չ ալ զոհի համար, հապա մեր ու ձեր միջեւ վկայ մը ըլլալու համար”: **29** Հետո՛ւ մեզմէ, որ մենք Տէրոջ դէմ ըմբոստանանք, եւ այսօր Տէրոջմէն հեռանանք՝ ողջակէզի համար, **հացի** ընծայի համար ու զոհի համար զոհասեղան մը կառուցանելով, Տէրոջ՝ մեր Աստուծոյն զոհասեղանէն զատ, որ իր խորանին առջեւ է»:

30 Երբ Փենեհէս քահանան եւ անոր հետ եղող համայնքի իշխաններն ու Իսրայէլի հազարաւորներուն գլխաւորները՝ Ռուբէնի որդիներուն, Գադի որդիներուն եւ Մանասէի որդիներուն ըսած խօսքերը լսեցին, իրենց ^հհաճելի եղաւ: **31** Եղիազարի որդին՝ Փենեհէս քահանան Ռուբէնի որդիներուն, Գադի որդիներուն ու Մանասէի որդիներուն ըսաւ. «Այսօր գիտցանք թէ Տէրը մեր մէջ է, որովհետեւ դուք Տէրոջ հանդէպ այս ուխտագանցութիւնը չըրիք. ^լուստի Իսրայէլի որդիները Տէրոջ ձեռքէն ազատեցիք»:

32 Այսպէս Եղիազարի որդին՝ Փենեհէս քահանան եւ իշխանները Ռուբէնի որդիներուն ու Գադի որդիներուն քովէն, Գաղաադի երկրէն, Իսրայէլի որդիներուն վերադարձան, Զանանի երկիրը, եւ անոնց լուր բերին: **33** Այս լուրը Իսրայէլի որդիներուն հաճելի եղաւ. Իսրայէլի որդիները Աստուած օրհնեցին, ու անոնց դէմ պատերազմելու համար բարձրանալու մասին ^կչմտածեցին՝ որպէսզի Ռուբէնի որդիներուն եւ Գադի որդիներուն բնակած երկիրը կործանեն: **34** Ռուբէնի որդիներն ու Գադի որդիները **այդ** զոհասեղանը **Վկայութիւն** կոչեցին, որովհետեւ **ըսին**. «Ան մեր միջեւ վկայ է թէ **մեր** Աստուածը Եհովան է»:

^բ Եբր.՝ մի՛ փրկեր

^գ Եբր.՝ ըսինք

^հ Եբր.՝ աչքերուն լաւ

^լ Եբր.՝ այն ատեն

^կ Եբր.՝ չխօսեցան

23

Երկար ժամանակէ ի վեր Տէրը Իսրայէլը հանգստացուցած էր անոր բոլոր շրջակայ թշնամիներէն: Յետու ծերացած էր ու «տարիքով յառաջացած»: **2** Ուստի Յետու կանչեց ամբողջ Իսրայէլը, անոր երէցները, գլխաւորները, դատաւորներն ու ոստիկանները, եւ անոնց ըսաւ. **3** «Ես ծերացայ ու տարիքով յառաջացայ: Դուք տեսաք ամէն ինչ որ Տէրը՝ ձեր Աստուածը այս բոլոր ազգերուն ըրաւ ձեր պատճառով. քանի Տէրը՝ ձեր Աստուածը՝ ի՛նք ձեզի համար պատերազմեցաւ: **4** Նայեցէ՛ք, այս մնացած ազգերը ձեզի իբր ժառանգութիւն վիճակով բաժնեցի՝ ձեր տոհմերուն համեմատ, նաեւ իմ կոտորած բոլոր ազգերս՝ Յորդանանէն մինչեւ Մեծ ծովը, դէպի արեւմուտք: **5** Տէրը՝ ձեր Աստուածը՝ ի՛նք ձեր առջեւէն պիտի քշէ զանոնք. ձեր առջեւէն պիտի վտարէ զանոնք, եւ անոնց երկրին պիտի տիրանաք, ինչպէս Տէրը՝ ձեր Աստուածը ձեզի խոստացաւ: **6** Ուստի շա՛տ ուժովցէք, որպէսզի Սոփսէսի Օրէնքի գիրքին մէջ գրուած ամէն ինչ զգուշութեամբ գործադրէք, ու անկէ աջ կողմ կամ ձախ կողմ չշեղիք. **7** որպէսզի ձեր քով մնացած այս ազգերուն ^բ չխառնուիք, անոնց աստուածներուն անունները չյիշատակէք եւ **անոնցմով** երդում չընէք, զանոնք չպաշտէք եւ անոնց չերկրպագէք. **8** հապա Տէրոջ՝ ձեր Աստուծոյն յարիք, ինչպէս մինչեւ այսօր ըրիք: **9** Տէրը ձեր առջեւէն մեծ ու հզօր ազգեր վտարեց, ու մինչեւ այսօր ո՛չ մէկը **կրցաւ**՝ ձեզի դիմադրել: **10** Ձեզմէ մէկը **անոնց** հազարը կը հալածէ, որովհետեւ Տէրը՝ ձեր Աստուածը՝ ի՛նք ձեզի համար կը պատերազմի, ինչպէս ձեզի խոստացաւ:

11 Ուստի շա՛տ ուշադիր եղէք ձեր անձերուն, որպէսզի Տէրը՝ ձեր Աստուածը սիրէք: **12** Բայց եթէ **անկէ** հեռանաք ու ձեր քով մնացած այս ազգերուն մնացորդին յարիք, անոնց խնամի ըլլաք, անոնց խառնուիք եւ անոնք ալ՝ ձեզի, **13** ստո՛ւգապէս գիտցէք թէ Տէրը՝ ձեր Աստուածը անգա՛մ մըն ալ այս ազգերը ձեր առջեւէն պիտի չվտարէ. հապա անոնք ձեզի վարմ ու որոգայթ պիտի ըլլան, ձեր կողերուն՝ խարազաններ եւ ձեր աչքերուն՝ փուշեր, մինչեւ որ կորսուիք այս լաւ Երկրին վրայէն, որ Տէրը՝ ձեր Աստուածը ձեզի տուաւ: **14** Ահա՛ ես այսօր ամբողջ երկրի ճամբան կ'երթամ, ու դուք ձեր ամբողջ սիրտով եւ ձեր ամբողջ անձով գիտէք թէ ոչինչ՝ պակսեցաւ այն բոլոր բարի խօսքերէն, որ Տէրը՝ ձեր Աստուածը ձեր մասին ըսեր էր. բոլորն ալ ձեր վրայ իրագործուեցան. անոնցմէ ո՛չ մէկ խօսք պակսեցաւ: **15** Հետեւաբար, ինչպէս Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ձեզի համար ըսած բոլոր բարի խօսքերը ձեր վրայ՝ իրագործուեցան, նոյնպէս Տէրը բոլոր չար խօսքերը ձեր վրայ պիտի բերէ, մինչեւ որ ձեզ բնաջնջէ այս լաւ Երկրին վրայէն, որ Տէրը՝ ձեր Աստուածը ձեզի տուաւ: **16** Եթէ Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ձեզի պատուիրած ուխտը անտեսէք ու երթաք ուրիշ աստուածներ պաշտէք եւ անոնց երկրպագէք, Տէրոջ բարկութիւնը ձեզի

^ա Եբր.՝ օրերը գացած

^բ Եբր.՝ մէջ չմտնէք

^գ Եբր.՝ ձեր առջեւ կայնիլ

^դ Եբր.՝ հողից

^ե Եբր.՝ ինկաւ

^զ Եբր.՝ եկան

^է Եբր.՝ հողից

դէմ պիտի բորբոքի ու ձեզի տուած լաւ երկրին վրայէն շուտով պիտի կորսուիք»:

ՅԵՍՈՒ ԿԸ ԽՕՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆՆ՝ ՍԻԻՔԷՍԻ ՄԷՋ

24

Յեսու իսրայէլի բոլոր տոհմերը Սիւքէմի մէջ հաւաքեց, եւ իսրայէլի երէցները, գլխաւորները, դատաւորներն ու ոստիկանները կանչեց. անոնք ալ Աստուծոյ ներկայացան: **2** Յեսու ամբողջ ժողովուրդին ըսաւ. «Տէրը՝ իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. «**Հին ատեն՝** ձեր հայրերը, Աբրահամի հայրը ու Նաքովրի հայրը՝ Թարա, «Գետին միւս կողմը կը բնակէին եւ ուրիշ աստուածներ կը պաշտէին: **3** Ե՛ս ձեր հայրը՝ Աբրահամը Գետին **միւս** կողմէն առի ու Զանանի ամբողջ երկրին մէջ անոր քալել տուի, անոր գարմը բազմացուցի եւ Իսահակը անոր տուի: **4** Իսահակի՝ Յակոբն ու Եսաւը տուի: Եսաւի Սէիրի լեռը տուի՝ որ անոր տիրանայ, իսկ Յակոբ եւ անոր որդիները Եգիպտոս իջան: **5** Մովսէսն ու Ահարոնը ղրկելով Եգիպտոսը հարուածեցի՝ անոր մէջ իրագործածիս համաձայն, յետոյ ձեզ դուրս հանեցի: **6** Ուստի ե՛ս ձեր հայրերը Եգիպտոսէն հանեցի, եւ դուք ծովը հասաք: Եգիպտացիները կառքերով ու ձիաւորներով հետապնդեցին ձեր հայրերը՝ մինչեւ Կարմիր ծովը: **7** Երբ ձեր հայրերը Տէրոջ աղաղակեցին, ան ձեր ու Եգիպտացիներուն միջեւ մթութիւն դրաւ, եւ ծովը անոնց վրայ բերելով՝ զանոնք ծածկեց: Ձեր աչքերը տեսան ինչ որ Եգիպտոսի մէջ իրագործեցի, ու երկար ժամանակ անապատին մէջ բնակեցաք: **8** Յետոյ ձեզ բերի Յորդանանի միւս կողմը բնակող Ամորհացիներուն երկիրը, եւ անոնք ձեզի դէմ պատերազմեցան: Ե՛ս զանոնք ձեր ձեռքը մատնեցի, ու անոնց երկրին տիրացաք. ե՛ս զանոնք ձեր առջեւէն բնաջնջեցի: **9** Մովաբի թագաւորը՝ Սեպփորեան Բաղակ կանգնեցաւ, ու իսրայէլի դէմ պատերազմեցաւ. **մարդ** ղրկեց եւ Բէովրեան Բաղաամը կանչեց, որպէսզի ձեզ անիծէ: **10** Բայց ես չուզեցի Բաղաամի մտիկ ընել, եւ **ընդհակառակը** ան ձեզ օրհնեց. ե՛ս ձեզ ազատեցի անոր ձեռքէն: **11** Ապա Յորդանանէն անցնելով Երիքով հասաք: Երիքովի տէրերը – Ամորհացիները, Փերեզացիները, Զանանացիները, Զետացիները, Գերգեսացիները, Խելացիներն ու Յեբուսացիները – ձեզի դէմ պատերազմեցան, սակայն ե՛ս զանոնք ձեր ձեռքը մատնեցի: **12** Ձեր առջեւէն իշամեղուններ ղրկեցի, որոնք զանոնք – Ամորհացիներուն երկու թագաւորները – ձեր առջեւէն վռնտեցին. ո՛չ քու սուրովդ եւ ո՛չ քու աղեղովդ **վռնտուեցան: 13** Ե՛ս ձեզի տուի երկիր մը՝ որուն մէջ դուն չյոգնեցար, ու քաղաքներ՝ որ դուք չկառուցանեցիք եւ որոնց մէջ կը բնակիք. կ’ուտէք այն այգիներէն ու ձիթենիներէն՝ որ դուք չտնկեցիք»:

14 Ուստի հիմա Տէրոջմէ՛ն վախցէք եւ զա՛յն պաշտեցէք՝ ^ահաւատարմութեամբ ու ճշմարտութեամբ. հանեցէ՛ք այն աստուածները, որ ձեր հայրերը Գետին միւս կողմը եւ Եգիպտոսի մէջ պաշտեցին, ու Տէ՛րը պաշտեցէք: **15** Բայց եթէ Տէրը պաշտելը «ձեզի հաճելի չի թուիր», ձեզի ընտրեցէ՛ք այսօր թէ ո՛վ պիտի պաշտէք.– Գետին միւս կողմը ձեր հայրերուն պաշտած աստուածնե՞րը, թէ Ամորհացիներուն աստուածները՝ որոնց երկրին մէջ դուք կը բնակիք. բայց ես ու իմ տունս Եհովա՛ն պիտի պաշտենք»:

16 Ժողովուրդը պատասխանեց. «Հեռո՛ւ մեզմէ, որ մենք Եհովան լքենք եւ ուրիշ աստուածներ պաշտենք. **17** որովհետեւ ^բԵհովան՝ ի՛նք է մեր Աստուածը», որ մեզ ու մեր

^ա Այսինքն՝ Եփրատի

^բ Եբր.՝ պարկեշտութեամբ

^գ Եբր.՝ ձեր աչքերուն գէշ է

^դ Կամ՝ մեր Աստուածը՝ Եհովան՝ ի՛նք է

ՅԵՍՈՒԻ ԳԻՐԸԸ

հայրերը Եգիպտոսի երկրէն՝ ստրկութեան տունէն բարձրացուց: Ի՛նք մեր աչքերուն առջեւ այս մեծ նշանները ըրաւ, եւ մեզ պահպանեց մեր գացած ամբողջ ճամբային մէջ ու բոլոր ժողովուրդներուն մէջ, որոնց մէջէն անցանք: **18** Եհովա՛ն բոլոր ժողովուրդները եւ **այս** երկրին մէջ բնակող Ամորհացիները մեր առջեւէն վռնտեց. մենք ալ Եհովա՛ն պիտի պաշտենք, որովհետեւ ի՛նք է մեր Աստուածը»:

19 Յեսու ժողովուրդին ըսաւ. «Դուք չէք կրնար Եհովան պաշտել, քանի որ ան սուրբ Աստուած է. ան նախանձախնդիր Աստուած ըլլալով՝ ձեր յանցանքներն ու մեղքերը չի ներեր: **20** Եթէ Եհովան լքէք եւ օտար աստուածներ պաշտէք, ան **ձեզի դէմ** պիտի դառնայ՝ ձեզի չարիք ընելու համար, ու ձեզ պիտի սպառէ՝ ձեզի բարիք ընելէ ետք»:

21 Ժողովուրդը Յեսուի ըսաւ. «Ո՛չ, հապա մենք Եհովա՛ն պիտի պաշտենք»:

22 Ուստի Յեսու ժողովուրդին ըսաւ. «Դուք ձեզի դէմ վկայ էք թէ դուք ձեզի Եհովան ընտրեցիք՝ զայն պաշտելու համար: (Անոնք ըսին. «Վկայ ենք»:) **23** Ուրեմն հիմա ձեր մէջ եղող օտար աստուածները հանեցէ՛ք, ու ձեր սիրտը Տէրոջ՝ Իսրայէլի՛ Աստուծոյն հակեցուցէ՛ք»:

24 Ժողովուրդը Յեսուի ըսաւ. «Մենք Տէրը՝ մեր Աստուածը պիտի պաշտենք, եւ անոր խօսքը մտիկ ընենք»:

25 Այդ օրը Յեսու ժողովուրդին հետ ուխտ մը կնքեց, ու Սիւքէմի մէջ անոր կանոն եւ «դատավճիռ դրաւ: **26** Յեսու այս խօսքերը Աստուծոյ Օրէնքի գիրքին մէջ գրեց: Մեծ քար մը առաւ, զայն Տէրոջ սրբարանին քով եղող բեւեկնիին տակ կանգնեցուց, **27** ու Յեսու ամբողջ ժողովուրդին ըսաւ. «Ահա՛ այս քարը մեզի դէմ վկայ պիտի ըլլայ, քանի որ ան Տէրոջ մեզի ըսած բոլոր խօսքերը լսեց. ուստի ան ձեզի դէմ թող վկայ ըլլայ, որպէսզի ձեր Աստուածը չուրանաք»:

28 Յետոյ Յեսու ժողովուրդը արձակեց, **եւ** իւրաքանչիւրը իր ժառանգութեան **գնաց**:

ՅԵՍՈՒ ԵՒ ԵՂԻԱԶԱՐ ԿԸ ՄԵՌՆԻՆ

29 Այս բաներէն ետք, Տէրոջ ծառան՝ Նաւեան Յեսու մեռաւ, հարիւր տասը տարեկան ըլլալով: **30** Զայն իր ժառանգութեան հողամասին մէջ թաղեցին, Եփրեմի լեռնակողմը եղող Թամնաթ-Սարայի մէջ, Գաաս լեռան հիւսիսային կողմը:

31 Իսրայէլ Տէրը պաշտեց Յեսուի բոլոր օրերուն մէջ, ու Յեսուէն ետք «ողջ մնացող» եւ Իսրայէլի համար Տէրոջ կատարած բոլոր գործերը գիտցող երէցներուն բոլոր օրերուն մէջ:

32 Յովսէփի ոսկորները, որ Իսրայէլի որդիները Եգիպտոսէն բարձրացուցեր էին, Սիւքէմի մէջ թաղեցին. **այն** արտի բաժինին մէջ, որ Յակոբ Սիւքէմի հօր՝ Եմովրի որդիներէն գներ էր հարիւր «կտոր արծաթի»: Ան Յովսէփի որդիներուն ժառանգութիւնը եղաւ:

33 Ահարոնի որդին՝ Եղիազար ալ մեռաւ, ու զայն իր որդիին՝ Փենեհէսի տրուած բլուրին վրայ թաղեցին, Եփրեմի լեռնակողմը:

^Է Կամ՝ սովորութիւն

^Ը Եբր.՝ իրենց օրերը երկարող

^Թ Կամ՝ գառնուկի